**<u>Գործ թիվ ԵԴ2/4026/02/26</u>**

**ՎՃԻՌ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

**Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը(այսուհետ՝ դատարան),նախագահությամբ Դատավոր՝ Աննա Շիլաջյանի**

---

2026 թվականի հունիսի 12-ին — քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), գրավոր ընթացակարգով, քննության առնելով քաղաքացիական գործն «ԻՄՊԵՔՍՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 01322649) ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ՀՎՀՀ՝ 02704199)՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով 2026 թվականի «փետրվարի» «4» «1» որոշմամբ հայտարարված թիվ «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրությամբ կայացված «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և այն մերժելու, ընթացակարգը չկայացած հայտարարելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով Պատվիրատուի ղեկավարին դիմելու, իսկ այդ պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց նախաձեռնելու մասին որոշումները, և որպես այդ որոշումների անվավերության հետևանք՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52-Ա/1 հրամանն անվավեր ճանաչելու, ինչպես նաև «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտերի գնահատման նիստը վերսկսելու և ՀՀ օրենսդրությամբ ու ընթացակարգի հրավերով սահմանված կարգով Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, շտկված փաստաթղթերով հայտը գնահատելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

«ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության ներկայացուցչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ին (նիստի արձանագրություն թիվ 3) ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, Ընթացակարգը չկայացած հայտարարելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով Պատվիրատուի ղեկավարին դիմելու, իսկ այդ պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց նախաձեռնելու մասին որոշումները անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցվորի ներկայացուցիչը էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով (այսուհետ՝ Համակարգ) 13.04.2026 թվականին, ժամը 15:44-ին ստեղծվել է (ներկայացրել է) հայցադիմում, որը 13.04.2026 թվականին մակագրվել է դատավորին, իսկ Համակարգում դատավորին և նրա աշխատակազմին հասանելի է դարձել նույն օրը ժամը 21:31-ին:

Հաշվի առնելով, որ այդ պահին աշխատանքային ժամն ավարտված է եղել, Համակարգում հասանելի դառնալու պահ է համարվում 14.04.2026 թվականը:

Դատարանի 17.04.2026 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանողից պահանջվել են ապացույցներ և նշանակվել է դատական ակտի հրապարակման օր:

Դատավոր Ա. Ծիլաջյանի 19.05.2026 թվականից մինչև 22.05.2025 թվականը գործուղման մեջ գտնվելու պատճառով դատական ակտը հրապարակվել է 25.05.2026 թվականին:

Դատարանի 25.05.2026 թվականի որոշմամբ փոփոխվել է հայցի հիմքը և առարկան:

Դատարանի 02.06.2026 թվականի որոշմամբ գործի քննության ժամկետը երկարաձգվել է և եզրափակիչ ակտի հրապարակման օր է նշանակվել 12.06.2026 թվականը:

**2. Հայցվորի դիրքորոշումը.**

Հայցվորի ներկայացուցիչը դիմելով Դատարան, հայցադիմումով մասնավորապես հայտնել է.

«(...) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Պատասխանող կամ Պատվիրատու) կողմից 2026 թվականի փետրվարի 4-ին նախաձեռնվել է «ԲԿԳԿԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը

(այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել են 05.02.2026 թվականին, և որի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Հայցվոր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 11.03.2026 թվականի թիվ 2 արձանագրության (գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 11.03.2026 թվականին) համաձայն՝ Հայցվորի ներկայացրած հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, որի հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2026 թվականի մարտի 3-ին որոշել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել մասնակցին (տվյալ դեպքում Հայցվորին) շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Հայցվորն իր՝ impexso.company@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին no-reply@eauction.armeps.am էլեկտրոնային փոստի հասցեից 03.03.2026 թվականին, ժամը 17:52-ին ստացել է «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերտառությամբ նամակ, որով ներկայացվել են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքում արձանագրված անճշտությունները, և առաջարկվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել էլեկտրոնային աճուրդի համակարգի (https://eauction.armeps.am) միջոցով: Էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված ծանուցումը էլեկտրոնային տարբերակով կից ներկայացվում է: Նշեմ, որ 03.03.2026 թվականին, ժամը 17:52-ին ստացված շտկում կատարելու մասին ծանուցմամբ սահմանված շտկում կատարելու մեկ աշխատանքային օրվա ժամկետը լրացել է 04.03.2026 թվականի ժամը 23:59-ին, այսինքն՝ մինչ այդ ժամն է թույլատրվել կատարել շտկում: Նշված հանգամանքը հաստատվում է նաև ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի N 03/26-1/5742-2026 գրությամբ, որը կից ներկայացնում է:

Հաջորդիվ նշեմ, որ էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշիվը՝ բազմակի անհաջող մուտքի փորձերի արդյունքում, 03/03/2026թ. ժամը 11:30-ից մինչ 05/03/2026թ. ժամը 12:30-ը արգելափակված է եղել, ինչի արդյունքում մասնակիցը՝ Հայցվորը, չի ունեցել համակարգի միջոցով շտկված փաստաթղթերը ներկայացնելու հնարավորություն: Որպես Հայցվորի օգտահաշվի արգելափակված լինելու հանգամանքը հիմնավորող ապացույց՝ կից ներկայացնում ենք ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի N 03/26-1/5742-2026 գրությունը: Հաշվի առնելով, որ Հայցվորի օգտահաշիվը եղել է արգելափակված՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը Հայցվորը ուղարկել է գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին, այն է՝ a.arakelyan@promotion.am:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 02.04.2026 թվականի թիվ 3 արձանագրության (գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 02.04.2026 թվականին) համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ սահմանված ժամկետում Հայցվորի կողմից համակարգի (https://eauction.armeps.am) միջոցով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

02.04.2026 թվականին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել

է՝

1. Հայցվորի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետով սահմանված պահանջները:

2. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով դիմել Պատվիրատուի ղեկավարին, իսկ նշյալ կետն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ժամանակահատվածը:

Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 02.04.2026 թվականին, ժամը 17:46-ին, որից հետո՝ 10 օրացուցային օրվա ընթացքում՝ հայցային վաղեմության ժամկետների պահպանմամբ, ներկայացվում է սույն հայցադիմումը:

Գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 02.04.2026 թվականին ընդունված վերոնշյալ որոշումները ենթակա են անվավեր ճանաչման՝ համաձայն ներքոնշյալ հիմնավորումների:

(...)

Ընթացակարգի հրավերի 4.1-ին կետի համաձայն՝ սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է: Սույն ընթացակարգը մեկից ավել չափաբաժիններով կազմակերպված լինելու դեպքում մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար: Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հրավերի 4.3-րդ կետի համաձայն՝

Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակ¬ցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության կամ սույն հրավերով սահմանված՝ վարկունակության վարկանիշ ունենալու մասին

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան); Ընդ որում՝

- 1.2 հավելվածը ներկայացնում է ՀՀ ռեզեդենտ չհանդիսացող մասնակիցը.

- 1.3 հավելվածը ներկայացնում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է.

- դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում.Եթե մասնակիցը հայտարարվում է ըտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հավելվածը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

2) գնային առաջարկ, որը ներկայացվում է համակարգի միջոցով: Գնային առաջարկի ներկայացման կարգը և պայմանները սահմանված են սույն հրավերի 1-ին մասի 5-րդ և 2-րդ մասի 2-րդ բաժնով.

3) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդել, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով: Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում, մոդել ունեցող ապրանքներ: եթե չի կիրառվում սույն մասի 1.1 կետի վերջին նախադասությամբ սահմանված պայմանը.

4) հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացվելու դեպքում մասնակիցը հայտում ներառում է դրա վճարումը հավաստող փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը. (….):

Ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի

մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և /կամ/ երբ ՀՀ կառավարության 20.06.2025թ. N 817-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված անձը մասնակցի կողմից առաջարկվում է որպես գործակալ / կատարող /,, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները: Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոնշյալ իրավանորմերի և Ընթացակարգի հրավերի պահանջներից նախ հետևում է, որ Ընթացակարգին մասնակցելու ցանկություն հայտնող յուրաքանչյուր անձ պետք է հայտը ներկայացնի Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով՝ ներկայացնելով պահանջվող բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները: Սա իրենից ներկայացնում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն այնքանով, որքանով Ընթացակարգին մասնակցությունը թույլատրելի է միայն Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտի ներկայացմամբ: Այլ կերպ ասած՝ Ընթացակարգին մասնակցելու յուրաքանչյուրի իրավունքը ենթադրում է նաև ուղղակի պարտավորություն՝ պահպանելու Ընթացակարգին մասնակցելու կանոնները, այդ թվում՝ հայտը ներկայացնելով էլեկտրոնային աճուրդի համակարգով (https://eauction.armeps.am): Նույն կերպ, եթե մասնակցի ներկայացրած հայտում Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ են արձանագրվել, ապա մասնակիցը կրում է պարտավորություն սահմանված ժամկետում շտկելու այդ անհամապատասխանությունները, ընդ որում, այդ անհամապատասխանությունը մասնակիցը պարտավոր է շտկել էլեկտրոնային աճուրդի համակարգի (https://eauction.armeps.am) միջոցով, ինչպես սահմանված է Ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետով: Հաջորդիվ նկատենք, որ գնման գործընթացի շրջանակում ստանձնած վերոնշյալ պարտավորությունների խախտման համար Օրենքով սահմանվել են որոշակի անբարենպաստ իրավական հետևանքներ (սանկցիաներ): Մասնավորապես, Օրենքի 6-րդ և 32-րդ հոդվածներից և Ընթացակարգի հրավերի հիշյալ դրույթներից հետևում է, որ գնման գործընթացի շրջանակում ստանձնած վերոնշյալ պարտավորությունների խախտած մասնակցի հայտը մերժվում է, և նա պարտավոր է վճարել հայտի ապահովման գումարը, իսկ դրա չվճարման կամ վճարման անհնարինության դեպքում տվյալ մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այլ կերպ ասած՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած վերոնշյալ պարտավորությունները խախտած մասնակիցը պատասխանատվություն է կրում նշված անբարենպաստ հետևանքներից որևէ մեկի՝ իր նկատմամբ կիրառմամբ:

Հաջորդիվ արձանագրենք, որ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, իսկ Օրենքի 4-րդ հոդվածով ուղղակիորեն սահմանված է, որ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, Օրենքից և իրավական այլ

ակտերից: Հետևաբար, նկատենք, որ այն իրավահարաբերությունները, որոնց մասով Օրենքը հատուկ իրավակարգավորումներ չի սահմանում (նկատի ունենք հատուկ նորմ), ապա դրանք նախ և առաջ ենթակա են կարգավորման ՀՀ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան: Այս առումով նկատենք, որ Օրենքով սահմանված չեն մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման համար պատասխանատվության, ինչպես նաև այդ պատասխանատվությունից ազատվելու հիմքերը, ուստի այդ մասով ենթակա են կիրառման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան իրավանորմերը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածով սահմանված իրավանորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ քաղաքացիական իրավահարաբերություններում պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պարտապանի պատասխանատվությունն առաջանում է վերջինիս մեղքի առկայության դեպքում: Ընդ որում, քաղաքացիական իրավահարաբերություններում գործում է պարտապանի մեղքի առկայության կանխավարկածը, եթե վերջինս չի ապացուցում իր մեղքի բացակայությունը, մասնավորապես այն, որ պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները: Ավելին, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և այդ գործունեության հետ կապված պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պարտապանի համար օրենսդիրը սահմանել է պատասխանատվության առավել խիստ կանոն, այն է՝ պարտապանը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով:

Վերոնշյալ իրավական կարգավորումները համադրելով սույն գործի փաստական հանգամանքների հետ՝ նախ նշեմ, որ Հայցվորը չի վիճարկում այն հանգամանքը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2026 թվականի մարտի 3-ի որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունները իսկապես եղել են և որ դրանք էլեկտրոնային աճուրդի համակարգի (https://eauction.armeps.am) միջոցով չի շտկել, այլ կերպ ասած՝ ձևական առումով չի պահպանել Ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետով սահմանված շտկման կատարման ձևաչափի պահանջը: Մինչդեռ, սույն գործով էական նշանակություն ունի այն հանգամանքի պարզումը, թե Հայցվորն արդյոք օբյեկտիվ հնարավորություն է ունեցել արձանագրված անհամապատասխանությունների շտկումն իրականացնելու էլեկտրոնային աճուրդի համակարգի (https://eauction.armeps.am) միջոցով, քանզի մեծապես այդ համակարգին հասանելիություն ունենալուց է կախված եղել Հայցվորի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած շտկման պարտավորության կատարումը: Բոլորովին այլ կլիներ իրավիճակը, եթե Հայցվորն ամեն դեպքում շտկման համար սահմանված ժամկետում՝ մինչև 04.03.2026 թվականի ժամը 23:59-ը, ունենար հասանելիություն էլեկտրոնային աճուրդի համակարգին, սակայն դրսևորեր անգործություն և չշտկեր անհամապատասխանությունները:

Սույն գործով տեղի է ունեցել հետևյալը: Հայցվորը իր՝ impexso.company@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին no-reply@eauction.armeps.am էլեկտրոնային փոստի հասցեից 03.03.2026 թվականին, ժամը 17:52-ին ստացել է «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերտառությամբ նամակ, որով ներկայացվել են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքում արձանագրված անճշտությունները, և առաջարկվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել էլեկտրոնային աճուրդի համակարգի (https://eauction.armeps.am)

միջոցով:

Էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշիվը՝ բազմակի անհաջող մուտքի փորձերի արդյունքում, 03/03/2026թ. ժամը 11:30-ից մինչ 05/03/2026թ. ժամը 12:30-ը արգելափակված է եղել, ինչի արդյունքում Հայցվորը չի ունեցել համակարգի միջոցով շտկված փաստաթղթերը ներկայացնելու օբյեկտիվ հնարավորություն: Որպես Հայցվորի օգտահաշվի արգելափակված լինելու հանգամանքը հիմնավորող ապացույց՝ կից ներկայացնում ենք ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի N 03/26-1/5742-2026 գրությունը, որով գնումների ոլորտը համակարգով պետական կառավարման լիազորված մարմինը հաստատել է նշված ժամանակահատվածում Հայցվորի օգտահաշվի արգելափակված լինելու և համակարգով փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության հանգամանքները: Հայցվորը միջոցներ է ձեռնարկել իր օգտահաշվով մուտք գործելու հնարավորությունը վերականգնելու ուղղությամբ, այդ թվում՝ փորձելով վերականգնել իր գաղտնաբառը, սակայն անհաջող փորձերից հետո դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով տրամադրել նոր գաղտնաբառ, որի արդյունքում արգելափակումը վերացվել միայն 05.03.2026թ. ժամը 12:30-ին, այն ժամանակ, երբ արդեն լրացել էր համակարգի միջոցով շտկում ներկայացնելու ժամկետը: Արձանագրված անհամապատասխանությունների շտկման պարտավորությունը կատարելու համար Հայցվորը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները, և այդպես էլ օբյեկտիվորեն չունենալով հնարավորություն սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով շտկված փաստաթղթերը ներկայացնելու՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը 04.03.2026 թվականին, ժամը 19:57-ին ուղարկել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին, այն է՝ a.arakelyan@promotion.am: Համապատասխան ապացույցը՝ էլեկտրոնային փոստից արտատպված, կից ներկայացվում է: Ընդ որում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին Հայցվորը 04.03.2026 թվականին, ժամը 19:57-ին ուղարկել է նաև Պատվիրատուի ղեկավարին ուղղված, պարզաբանում պարունակող գրություն, որով հայտնել է, որ Հայցվորը պատրաստ է կատարելու շտկումը, սակայն էլեկտրոնային աճուրդի համակարգում Հայցվորի մուտքի հնարավորությունը արգելափակվել է, որի պատճառով էլեկտրոնային համակարգի միջոցով շտկում կատարելու անհնարինություն է առաջացել և դեռևս չի հաջողվել վերականգնել: Նույն գրությամբ Հայցվորը խնդրել է հաշվի առնել տեխնիկական խոտանը և անհրաժեշտ շտկումը համարել ընդունված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկման տարբերակով: Ընդ որում, նշեմ, որ ինչպես Պատվիրատուի ղեկավարին ուղղված, պարզաբանում պարունակող վերոնշյալ գրությունը, այնպես էլ շտկված փաստաթղթերը՝ հավելված 1.1-ը և հավելված 1.3-ը, Հայցվորի ներկայացուցիչ Արման Պետրոսյանի էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է 04.03.2026 թվականին՝ համապատասխանաբար ժամը 19:26-ին (գրությունը), ժամը 18:54-ին (հավելված 1.1- ը) և ժամը 18:16-ին (հավելված 1.3-ը): Նշված փաստաթղթերին կցվել է նաև Հայցվորի կողմից Արման Պետրոսյանին տրված լիազորագիրը: Նկատենք, որ նշված փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին են ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունների շտկման համար սահմանված ժամկետում, այն է՝ մինչև 04.03.2026 թվականի ժամը 23:59-ը:

Տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է քննարկման առարկա դարձներ Հայցվորի ներկայացրած, պարզաբանում պարունակող վերոնշյալ գրությունը՝ պարզելու համար այն հանգամանքը, թե

արդյոք Հայցվորն օբյեկտիվ հնարավորություն ունեցել է էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը ներկայացնելու, թե՝ ոչ, անհնարինության առկայության դեպքում պարզելով, թե այն ինչով է պայմանավորված եղել: Մասնավորապես, նշված հանգամանքների պարզումից էր կախված Հայցվորի գործողություններին կամ անգործությանը ճիշտ իրավական գնահատական տալու հարցը, քանզի գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության ամեն մի խախտում չէ, որ անպայմանորեն հանգեցնում է մասնակցի հայտի մերժման և Օրենքով սահմանված մյուս անբարենպաստ հետևանքներին: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն առնվազն պետք է ուսումնասիրեր Հայցվորի կողմից ներկայացված, պարզաբանում պարունակող վերոնշյալ գրության մեջ վկայակոչված հանգամանքների առկայությունը՝ միաժամանակ քննարկելով նաև շտկումը էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով կատարելու պարտավորության խախտման համար սահմանված պատասխանատվության՝ Հայցվորի հայտի մերժման և Օրենքով սահմանված մյուս անբարենպաստ հետևանքների (պատասխանատվության) կիրառման իրավաչափ հիմքերի առկայության հարցը: Այս մասով կարևոր եմ համարում նշել, որ բողոքարկվող որոշումները կայացնելու ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի տիրապետման ներքո է եղել ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի N 03/26-1/5742-2026 գրությունը՝ ուղղված Պատասխանողի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող պարոն Կարեն Ղարիբյանին, որով Պատասխանողը տեղեկացվել է Հայցվորի օգտահաշվի արգելափակման, արգելափակված լինելու ժամանակահատվածի, և այդ ընթացքում էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով Հայցվորի կողմից փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության մասին: Ընդ որում, ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնող լիազորված մարմին, նույն գրությամբ Պատասխանողին հայտնել է հետևյալը. «(....) Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից աշխատանքային կարգով տրամադրված՝ շտկված փաստաթղթերը (կցվում են) էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված են շտկման համար սահմանված ժամկետում, ինչպես նաև, որ դրանք քարտուղարին ուղարկվել են մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը, գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը կարող է հիմք ընդունել քարտուղարի էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը և հրավերով սահմանված կարգով համակարգում շարունակել հայտի գնահատումը, համոզվելով, որ էլեկտրոնային ստորագրությունները վավեր են, իսկ փաստաթղթերը ստորագրված են շտկման համար նախատեսված ժամանակահատվածում:»:

Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, արձանագրելով, որ Հայցվորի կողմից համակարգի (https://eauction.armeps.am) միջոցով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները, այդպես էլ քննարկման առարկա չի դարձրել համակարգի միջոցով դրանք չներկայացնելու վերաբերյալ Հայցվորի պատճառաբանությունը և փաստացի անտեսել լիազորված մարմնի վերոնշյալ գրությամբ նշված՝ Հայցվորի օգտահաշվի արգելափակման, համակարգով փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության վերաբերյալ տեղեկությունները և հայտերի գնահատումը շարունակելու վերաբերյալ արտահայտված դիրքորոշումը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Հայցվորի նկատմամբ կիրառել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման համար սահմանված պատասխանատվության միջոցներ այն դեպքում, երբ առկա են եղել Հայցվորին այդ պատասխանատվությունից (անբարենպաստ հետևանքների կիրառումից) ազատելու վերաբերյալ իրավաչափ հիմքեր, այն է՝ այնպիսի արտակարգ և անկանխելի հանգամանքներ՝ Հայցվորի օգտահաշվի արգելափակված լինելը և էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով փաստաթղթեր ներկայացնելու օբյեկտիվ անհնարինությունը, որոնց առկայության պայմաններում Հայցվորը մեծ ցանկության դեպքում անգամ չէր

կարող շտկված փաստաթղթերը համակարգի միջոցով ներկայացնել: Այդուհանդերձ, Հայցվորը բոլոր դեպքերում պատրաստակամ և ձեռնամուխ է եղել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության՝ շտկման կատարմանը՝ շտկված և էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերի փաթեթը ներկայացնելով սահմանված ժամկետում իր համար հասանելի կապի միջոցով՝ դրանք ուղարկելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին՝ միաժամանակ պարզաբանելով նաև այդ եղանակով փաստաթղթերի ներկայացման պատճառը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված հանգամանքների հաշվառմամբ պարտավոր էր ընդունել Հայցվորի կողմից ներկայացված, շտկված փաստաթղթերը և շարունակել հայտերի գնահատումը, մինչդեռ ոչ իրավաչափորեն մերժել է Հայցվորի հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 02.04.2026 թվականին ընդունված և սույն հայցադիմումով բողոքարկվող որոշումները վերոնշյալ հիմքերով և պատճառաբանությամբ ոչ իրավաչափ են և ենթակա են անվավեր ճանաչման:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերոնշյալ որոշումներն անվավեր ճանաչելուց բացի, գտնում եմ, որ անհրաժեշտ է վերացնել նաև դրանց հետևանքները: Մասնավորապես, անհրաժեշտ է, որպես նշված որոշումների անվավեր ճանաչման հետևանք, պարտավորեցնել Պատասխանողին վերսկսել Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտերի գնահատման նիստը և ՀՀ օրենսդրությամբ և Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով գնահատել Հայցվորի կողմից ներկայացված, շտկված փաստաթղթերով հայտը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերոնշյալ որոշումների անվավերության նշված հետևանքների կիրառումը կոչված է ապահովելու Հայցվորի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը և երաշխավորելու, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սահմանված կարգով կգնահատի Հայցվորի կողմից ներկայացված, շտկված փաստաթղթերով հայտը՝ այդպիսով բացառելով այդ հարցի մասով հնարավոր դատական վեճի առաջացումը:

Անդրադառնալով դատական ծախսերին՝ նշեմ, որ Հայցվորն իր իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով դիմել է իրավաբանական օգնության՝ 10.04.2026թ.-ին իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելով «ՀՈՎՍԵՓՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի հետ՝ վճարելով 300.000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ (պայմանագրի պատճենը կցվում է): Հայցվորի ներկայացուցիչ Դավիթ Գագիկի Հովսեփյանս հանդիսանում եմ «ՀՈՎՍԵՓՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի միակ մասնակիցը և տնօրենը, որի վերաբերյալ ապացույցը կցում եմ սույն հայցադիմումին: Գտնում եմ, որ վերոնշյալ որոշումներն անվավեր ճանաչելուց և դրանց հետևանքները վերացնելուց բացի, Պատասխանողից, որպես դատական ծախս, անհրաժեշտ է բռնագանձել նաև իրավաբանական ծառայությունների դիմաց Հայցվորի կողմից վճարված գումարը, ինչպես նաև պետական տուրքի գումարը:»:

Ելնելով վերոգրյալից հայցվորի ներկայացուցիչը խնդրել է Անվավեր ճանաչել «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ին (նիստի արձանագրություն թիվ 3) ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, Ընթացակարգը չկայացած հայտարարելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով Պատվիրատուի ղեկավարին դիմելու, իսկ այդ պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց նախաձեռնելու մասին որոշումները, և որպես այդ որոշումների անվավերության հետևանք՝ պարտավորեցնել Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով վերսկսել հայտերի գնահատման նիստը և ՀՀ օրենսդրությամբ ու Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով գնահատել Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, շտկված փաստաթղթերով հայտը:

Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի բռնագանձել 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հայցվորի ներկայացուցիչը 16.05.2026 թվականին հայցվորի ներկայացուցիչը միջնորդել է հայցի հիմք և առարկան փոփոխել:

Միջնորդությամբ վերջինս մասնավորապես հայտնել է.

«Ձեր վարույթում է գտնվում թիվ ԵԴ2/4026/02/26 քաղաքացիական գործն ըստ հայցի«ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ին (նիստի արձանագրություն թիվ 3) ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, Ընթացակարգը չկայացած հայտարարելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով Պատվիրատուի ղեկավարին դիմելու, իսկ այդ պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց նախաձեռնելու մասին որոշումները անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայտնում եմ, որ թիվ ԵԴ2/4026/02/26 քաղաքացիական գործով հայցադիմումը ներկայացնելու օրվանից՝ 13.04.2026 թվականից հետո՝ 15.04.2026 թվականին, էլեկտրոնային փոստի միջոցով ստացել ենք Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52Ա/1 հրամանը (այսուհետ նաև՝ Հրաման), որը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 17.04.2026 թվականին, և որի համաձայն՝ Հայցվորը ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 03.03.2026 թվականի որոշմամբ արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու, այն է՝ արձանագրված թերությունների շտկված տարբերակները էլեկտրոնային աճուրդի համակարգի (https://eauction.armeps.am) միջոցով չներկայացնելու պատճառաբանությամբ,

որը Հրամանով որակվել է որպես գնման գործընթացքում ստանձնած պարտավորության խախտում:

Հաջորդիվ նշեմ, որ 22.04.2026 թվականին Պատասխանողի կողմից ներկայացվել է հայցադիմումի պատասխան, որով վերջինս Դատարանին հայտնել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ առ այն, որ «(....) թե՛ Հայցվորը և թե՛ ՀՀ Ֆինանսների նախարարությունն նշել են այն հանգամանքը, որ Հայցվորի համակարգի արգելափակումը եղել է հենց՛ Հայցվորի կողմից բազմակի անգամ մուտք գործելու անհաջող փորձերը: Այսինքն, Հայցվորի այն պնդումը, որ շտկում չտրամադրելը արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով է և վերջինս մեղք չունի առաջացած իրավիճակի համար՝ անհիմն է և առարկայազուրկ: Հենց Հայցվորը իր ներկայացրած դիրքորոշումներով ընդունել է իր մեղավորությունը, նշելով, որ համակարգն արգելափակվել է իր կողմից բազմակի անհաջող մուտքի փորձերի արդյունքում:»: Այս մասով նշեմ, որ հայցադիմումում մենք չենք նշել, որ այդ բազմակի անհաջող փորձերը կատարվել են Հայցվորի կողմից, այդ հանգամանքը մենք երբևիցե չենք ընդունել և չենք ընդունում, նման բան նշված չէ նաև ՀՀ ֆինանսների նախարարության գրության մեջ, վերջինս չի նշել, թե ում կողմից են եղել բազմակի անհաջող մուտքի փորձերը: Այդուհանդերձ, նշեմ, որ այդ անհաջող մուտքի փորձերը եղել են մեզ դեռևս անհայտ անձի (անձանց) կողմից, որի վերաբերյալ ապացույցները և հիմնավորումները կներկայացնենք ստորև:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված, վստահորդիս արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացնելու սույն գործով ներկայացված հայցի հիմքը և առարկան, ինչից ելնելով՝ ներկայացնում եմ սույն միջնորդությունը ներքոնշյալի մասին:

Նախ և առաջ անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ այն ընթացակարգային խախտմանը, որն էական նշանակություն ունի սույն գործով բողոքարկվող Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների ոչ իրավաչափ լինելու տեսանկյունից:

(…)

Վերոգրյալ կարգավորումները հիմք ընդունելով, հաշվի առնելով, որ Ընթացակարգի չափաբաժինների քանակը 3-ն է, արձանագրենք, որ Ընթացակարգի շրջանակներում հայտերի գնահատումը պետք է իրականացվեր դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը եղել է 17.02.2026 թվականի ժամը 12:00-ն, հետևաբար հայտերի գնահատումը պետք է իրականացվեր 17.02.2026 թվականից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝ մինչև 09.03.2026 թվականը ներառյալ: Նկատի ունենալով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2026 թվականի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է, ապա արձանագրենք, որ հայտերի գնահատման իրականացման վերջնաժամկետը տվյալ դեպքում եղել է 10.03.2026 թվականը: Այլ կերպ ասած՝ միայն այդ ժամկետի ընթացքում էր Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավասու Հայցվորին առաջարկելու շտկել անհամապատասխանությունները, և այնուհետև գնահատելու, թե արդյոք շտկումը կատարվել է, թե՝ ոչ, կամ կատարվել է պատշաճ ձևով, թե՝ ոչ:

Սույն գործով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման ժամկետի ընթացքում Հայցվորին առաջարկել է շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները, սակայն մինչև 10.03.2026

թվականը ներառյալ չի ավարտել Ընթացակարգի հայտերի գնահատման նիստը և որոշում չի կայացրել Հայցվորի հայտը բավարար գնահատելու կամ այն մերժելու մասին: Փոխարենը 11.03.2026 թվականից վերսկսել է հայտերի գնահատման նիստը և այն ավարտել 02.04.2026 թվականին՝ այդպիսով թույլ տալով Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 8.8-րդ կետի վերջին նախադասության պահանջների խախտում, ինչն էլ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ին (նիստի արձանագրություն թիվ 3) ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայցվորի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, Ընթացակարգը չկայացած հայտարարելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով Պատվիրատուի ղեկավարին դիմելու, իսկ այդ պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց նախաձեռնելու մասին որոշումները դարձնում են ոչ իրավաչափ այնքանով, որքանով դրանք ընդունվել են սահմանված ժամկետների խախտմամբ, քանզի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.03.2026 թվականից հետո այլևս իրավասու չէր հայտերի գնահատում իրականացնելու և դրա վերաբերյալ որոշումներ ընդունելու:

Հաջորդիվ անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշվի արգելափակման, դրա մասին Հայցվորի կողմից լիազոր մարմնին տեղեկացնելու, օգտահաշվի արգելափակմանը Հայցվորի առնչության և ներքոնշյալ մի շարք այլ էական հարցերին:

Դատարանին հայտնում եմ, որ որպես Հայցվորի ներկայացուցիչ՝ 05.05.2026 թվականին էլեկտրոնային հարցումների միասնական համակարգի (e-request.am) միջոցով հարցմամբ դիմել եմ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցադրումների մասին.

1. «ԻՄՊԵՔՍՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (պետական գրանցման համարը՝ 271.110.1236225, ՀՎՀՀ՝ 01322649, գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, Մարգարյան փ., շ. 23, բն. 22, այսուհետ նաև՝ Ընկերություն) էլեկտրոնային աճուրդի համակարգի (https://eauction.armeps.am) միջոցով ե՞րբ է ներկայացրել «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ, և այդ հայտը ի՞նչ բացառիկ թվային նույնականացնող հասցեով (IP address) համակարգչի միջոցով է ներկայացվել՝ հայտնելով այդ համակարգչի գտնվելու վայրի հասցեն՝ ըստ բացառիկ թվային նույնականացնող հասցեի (IP address):

2. Մինչ 03.03.2026թ. ժամը 11:30-ից էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Ընկերության օգտահաշվի արգելափակումը ինչպե՞ս են դրսևորվել այդ նույն օգտահաշիվ բազմակի անհաջող մուտքի փորձերը (օգտանու՞նն է սխալ նշվել, թե՞ գաղտնաբառը), ի՞նչ բացառիկ թվային նույնականացնող հասցեով (IP address) համակարգչի կամ այլ սարքի միջոցով է փորձ արվել մուտք գործել Ընկերության օգտահաշիվ՝ հայտնելով այդ համակարգչի կամ այլ սարքի գտնվելու վայրի հասցեն՝ ըստ բացառիկ թվային նույնականացնող հասցեի (IP address):

3. Ընթացակարգի հայտի շտկման նպատակով 04.03.2026 թվականին Ընկերության ներկայացուցչի կողմից փորձ է կատարվել մուտք գործել էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am)

Ընկերության օգտահաշիվ: Խնդրում եմ հայտնել, թե ինչ բացառիկ թվային նույնականացնող հասցեով (IP address) համակարգչի միջոցով է 04.03.2026 թվականին փորձ կատարվել մուտք գործել էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Ընկերության օգտահաշիվ՝ հայտնելով այդ համակարգչի գտնվելու վայրի հասցեն՝ ըստ բացառիկ թվային նույնականացնող հասցեի (IP address) և այն ժամերը և րոպեները, որոնց ժամանակ փորձ է կատարվել մուտք գործել Ընկերության օգտահաշիվ:

4. Ընկերության ներկայացուցիչը 04.03.2026 թվականին ե՞րբ (ժամը և րոպեն) է զանգահարել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հայտնելով էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Ընկերության օգտահաշիվ մուտք գործելու անհնարինության մասին, և ե՞րբ է վերականգնվել էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Ընկերության օգտահաշիվ մուտք գործելու հնարավորությունը:

Այնուհետև ի լրումն վերոնշյալ՝ 05.05.2026 թվականի թիվ 1964649 հարցման (հսկիչ համարը՝ MF72-F2E5-8C61-5A88)՝ 06.05.2026 թվականի թիվ 1966448 գրությամբ (հսկիչ համարը՝ MFAD-F69C-BDF6-3D23) խնդրել եմ նույն հարցման 4-րդ հարցադրումն ընդունել հետևյալ բովանդակությամբ. «Ընկերության ներկայացուցիչը +37444993331 հեռախոսահամարից 04.03.2026 թվականին ե՞րբ (ժամը և րոպեն) է զանգահարել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հայտնելով էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Ընկերության օգտահաշիվ մուտք գործելու անհնարինության մասին, և ե՞րբ է վերականգնվել էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Ընկերության օգտահաշիվ մուտք գործելու հնարավորությունը:»:

Ի պատասխան վերոնշյալ հարցման և գրության՝ 14.05.2026 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով ստացել եմ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի թիվ 03/26-1/12561-2026 գրությունը, որով հայտնվել է հետևյալը. «Ի պատասխան Ձեր սույն թվականի մայիսի 06-ի թիվ 1964649 և 1966448 գրությունների՝ հայտնում ենք, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգին «Իմպեքսոn» ՍՊԸ-ի կողմից մասնակցության հայտը ներկայացվել է 16/02/2026թ. ժամը 20:10:41-ին: Հայտնում ենք նաև, որ էլեկտրոնային գնումների համակարգում որպես մատակարար գրանցված ընկերության օգտատիրոջ էջն համակարգի կողմից ավտոմատ կերպով ապակտիվացվում է միայն այն դեպքում, երբ ARMEPS համակարգում իրականացվում է անընդմեջ առավելագույնը թվով 10 անհաջող մուտքի փորձ՝ ճիշտ մուտքանվան և սխալ գաղտնաբառի համակցությամբ: Միաժամանակ հայտնում ենք, որ գրությամբ նշված հեռախոսահամարից 011 800 600 հեռախոսահամարին զանգ կատարվել է 04.03.2026թ. ժամը 17:52:52-ին, որի շրջանակում դիմողին պարզաբանվել է, որ օգտատիրոջ հաշվի վերականգնման և նույնականացման գործընթացը պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացնել գրություն: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Իմպեքսոn» ՍՊԸ-ն նոր գաղտնաբառ ստանալու համար դիմել է Նախարարությանը 05/03/2026թ., իսկ գաղտնաբառի տրամադրումը Նախարարության կողմից իրականացվել է նույն օրը ժամը 12:30-ին (գրությունները կցվում են): Կից տրամադրում ենք էլեկտրոնային գնումների համակարգերում առկա գրությամբ պահանջվող տեղեկատվությունը և հայտնում ենք, որ Նախարարությունը չի տիրապետում օգտատիրոջ գործողություններում ամրագրված IP հասցեների տեղակայման վայրի և օգտագործված սարքավորումների վերաբերյալ տեղեկատվությանը: Առդիր՝ 2 ֆայլ:»:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված վերոնշյալ տեղեկությունները հիմք ընդունելով՝ Դատարանին հայտնում եմ, որ Ընթացակարգին մասնակցության հայտի շտկման ծանուցումը Հայցվորը էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է 03.03.2026թ., ժամը 17:52-ին՝ աշխատանքային օրվա ավարտին, որի վերաբերյալ ապացույցը ներկայացրել էինք հայցադիմումին կից: Ծանուցումը ստանալուց հետո Հայցվորը ձեռնամուխ է եղել արձանագրված անհամապատասխանությունների շտկմանը և մինչև անհրաժեշտ շտկումների կատարումը մուտք չի գործել էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) իր օգտահաշիվ և տեղյակ չի եղել, որ իր օգտահաշիվն արգելափակված է: Միաժամանակ հայտնում եմ, որ Հայցվորը Ընթացակարգին իր պատշաճ մասնակցությունն ապահովելու համար ձեռք է բերել գնումների հետ կապված խորհրդատվական ծառայություններ՝ 03.02.2026 թվականին ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելով «Սմարթբիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի հետ, որը գտնվում և գործունեություն է ծավալում ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի քաղաքում, ինչում կարող ենք համոզվել՝ ուսումնասիրելով նշված պայմանագրի կնքման վայրի մասին նշումը, այն է՝ ք. Գյումրի, և «Սմարթբիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի՝ պայմանագրում նշված գտնվելու վայրի հասցեն, այն է՝ ք. Գյումրի, Անկախության 9ա, 209:

Հաջորդիվ հայտնում եմ, որ Հայցվորի անունից Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացրել է Արման Պետրոսյանը, ով «Սմարթբիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի տնօրենն է (տե՛ս վերոնշյալ պայմանագրի տեքստում): Ինչպես պարզ է դառնում ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի թիվ 03/26-1/12561-2026 գրությունից, Ընթացակարգին Հայցվորի մասնակցության հայտը ներկայացվել է 16/02/2026թ. ժամը 20:10:41-ին:

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի թիվ 03/26-1/12561-2026 գրությանը կից ներկայացվել են թվով 2 էլեկտրոնային ֆայլեր՝ microsoft word և excel ֆորմատներով, որոնցում նշված են էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշվում կատարված գործողությունները՝ ըստ օրվա ու ժամի, գործողության կատարողի համակարգչային սարքի բացառիկ թվային նույնականացնող հասցեի (IP address) և կատարված գործողության բնութագրի: Սույն միջնորդությանը կցված, Հայցվորի օգտահաշվում կատարված գործողությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող թվով 2 էլեկտրոնային ֆայլերի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված լինելու հարցում Դատարանը և Պատասխանողը կարող են համոզվել՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի թիվ 03/26-1/12561-2026 գրությունը և դրան կցված էլեկտրոնային ֆայլերը ներբեռնելով էլեկտրոնային հարցումների միասնական համակարգից (e-request.am) հետևյալ հսկիչ համարով՝ MF72-F2E5-8C61-5A88: Հաշվի առնելով, որ քաղաքացիական դատավարության էլեկտրոնային համակարգը թույլ չի տալիս ներբեռնել microsoft excel ֆորմատով ֆայլը, այն մեր կողմից դարձվել է pdf ֆորմատ, և ներբեռնվում է այդպիսին, սակայն սույն միջնորդության մեջ այն կանվանենք այն նույն ֆորմատով անվանումով՝ microsoft excel, որը տրամադրվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ միաժամանակ Դատարանին և Պատասխանողին խնդրելով առաջնահերթորեն դիտարկել microsoft excel ֆորմատով տարբերակը, որը հասանելի է էլեկտրոնային հարցումների միասնական համակարգում (e-request.am) վերոնշյալ հսկիչ համարով:

Սույն միջնորդությանը կցված, Հայցվորի օգտահաշվում կատարված գործողությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող microsoft word ֆորմատով ֆայլում առկա տեղեկությունների պարզ է դառնում, որ Ընթացակարգին Հայցվորի մասնակցության հայտը 16/02/2026թ. ժամը 20:10:41-ին ներկայացվել է հետևյալ բացառիկ թվային նույնականացնող

հասցեով (IP address) համակարգչից՝ 195.8.50.182 (Դատարանի և Պատասխանողի կողմից որոնումը դյուրացնելու նպատակով ընդգծել ենք դեղին գույնով):

Բացառիկ թվային նույնականացնող հասցեների (IP address)՝ https://myip.ms որոնողական կայքէջում առկա տեղեկությունների համաձայն՝ 195.8.50.182 բացառիկ թվային նույնականացնող հասցեով (IP address) համակարգիչը գտնվում է հետևյալ վայրում՝ Հայաստան, Շիրակ, Գյումրի (կայքէջից արտատպումները անգլերենով և հայերենով կից ներկայացվում են): Այլ կերպ ասած՝ Ընթացակարգին մասնակցության համար օգտագործվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում, մասնավորապես՝ Գյումրի քաղաքում գտնվող, 195.8.50.182 բացառիկ թվային նույնականացնող հասցեով (IP address) համակարգիչը, որը հայտնում ենք՝ շահագործվում է «Սմարթբիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի կողմից: Նաև հայտնում եմ, որ բացի նշված համակարգչից, էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշիվ մուտք գործելու համար «Սմարթբիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի կողմից օգտագործվել են նաև հետևյալ բացառիկ թվային նույնականացնող հասցեներով (IP address) համակարգիչները՝ 195.8.50.123 և 185.177.104.206, որոնց գտնվելու վայրը նույնպես, համաձայն բացառիկ թվային նույնականացնող հասցեների (IP address)՝ https://myip.ms որոնողական կայքէջում առկա տեղեկությունների, Հայաստան, Շիրակ, Գյումրին է (կայքէջից արտատպումները անգլերենով և հայերենով կից ներկայացվում են):

Հայտնում եմ, որ Հայցվորը հստակ տիրապետել է էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) իր օգտահաշիվ մուտք գործելու մուտքանվանն ու գաղտնաբառին, և օգտահաշիվը չի արգելափակվել Հայցվորի, մասնավորապես Ընթացակարգին մասնակցության ապահովման համար պատասխանատու «Սմարթբիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի իրավասու անձի կողմից բազմակի անհաջող մուտքի փորձերի հետևանքով, ի հավաստումն որի՝ հայտնում եմ ներքոնշյալ տեղեկությունները:

Հայցադիմումին կից ներկայացված ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի N 03/26-1/5742-2026 գրությունից պարզ է դառնում, որ համակարգում «Իմպեքսոn» ՍՊԸ-ի օգտահաշիվը՝ բազմակի անհաջող մուտքի փորձերի արդյունքում, 03/03/2026թ. ժամը 11:30-ից մինչ 05/03/2026թ. ժամը 12:30-ը արգելափակված է եղել, ինչի արդյունքում մասնակիցը չի ունեցել համակարգի միջոցով շտկված փաստաթղթերը ներկայացնելու հնարավորություն: Հատկանշական է, որ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի թիվ 03/26-1/12561-2026 գրությանը կցված, Հայցվորի օգտահաշվում կատարված գործողությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող microsoft excel ֆորմատով էլեկտրոնային ֆայլում առկա տեղեկություններից պարզ է դառնում, որ մեզ անհայտ բացառիկ թվային նույնականացնող հասցեներով (IP address) համակարգիչներից կամ այլ սարքերից էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշիվ բազմակի ահաջող մուտքի փորձեր են կատարվել: Այդ համակարգիչների կամ այլ սարքերի բացառիկ թվային նույնականացնող հասցեներն են (IP address)՝ 178.78.132.229, 178.160.207.138 և 178.78.139.176, որոնցով 03.03.2026 թվականի ժամը 11:21-ից մինչև ժամը 18:01-ը ներառյալ կատարվել է թվով 97 անհաջող մուտքի փորձ (ֆայլում այդ անհաջող փորձերը ձևակերպված են այսպես՝ audit.eregistration.user.login.failed), ինչի հետևանքով էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշիվը արգելափակվել է: Նշված բացառիկ թվային նույնականացնող հասցեներով (IP address) համակարգիչների կամ այլ սարքերի գտնվելու վայրը Հայաստանում է, սակայն որոնողական համակարգը չի կարողացել տեղորոշել դրանց գտնվելու վայրն ըստ մարզի կամ քաղաքի (կայքէջից արտատպումները անգլերենով և

հայերենով կից ներկայացվում են): Նույն կերպ մեզ անհայտ այլ համակարգչի կամ սարքից (բացառիկ թվային նույնականացնող հասցեն (IP address)՝ 81.16.9.106) 04.03.2026 թվականի ժամը 12:47-ից, երբ արդեն արգելափակված է եղել Հայցվորի օգտահաշիվը, մինչև նույն օրվա ժամը 23:29-ը ներառյալ, կատարվել է էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշիվ թվով 257 անհաջող մուտքի փորձ (ֆայլում այդ անհաջող փորձերը ձևակերպված են այսպես՝ audit.eregistration.user.login.failed): 81.16.9.106 բացառիկ թվային նույնականացնող հասցեով (IP address) համակարգչի կամ այլ սարքի գտնվելու վայրը Հայաստանում է, սակայն որոնողական համակարգը չի կարողացել տեղորոշել դրա գտնվելու վայրն ըստ մարզի կամ քաղաքի (կայքէջից արտատպումները անգլերենով և հայերենով կից ներկայացվում են): Այս մասով նկատենք, որ էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշիվ մուտք գործելու համար մեզ անհայտ թվով 4 համակարգչից կամ այլ սարքից կատարվել է անհաջող մուտքի ընդհանուր թվով 354 (97+257) փորձ, ինչը վկայում է մեզ անհայտ անձի (անձանց) կողմից Ընթացակարգին Հայցվորի հետագա մասնակցությունը տապալելու ակնհայտ դիտավորության մասին, քանզի այդ փորձերը շարունակվել են գրեթե մինչև շտկման համար համակարգի կողմից սահմանված վերջնաժամկետի (04.03.2026թ. ժամը 23:59) ավարտը՝ մինչև 04.03.2026թ. ժամը 23:29-ը՝ այդպիսով ամեն կերպ փորձելով կանխել անգամ օգտահաշվի ապարգելափակման դեպքում Հայցվորի կողմից օգտահաշիվ մուտք գործելը և շտկված փաստաթղթերը ներկայացնելը: Անհաջող մուտքի փորձերին վերաբերող նշված տեղեկությունններն ամբողջությամբ արտացոլված են Հայցվորի օգտահաշվում կատարված գործողությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող microsoft excel ֆորմատով էլեկտրոնային ֆայլում: Այս համատեքստում նկատենք, որ անհիմն են Պատասխանողի պնդումներն առ այն, թե Հայցվորի օգտահաշիվը արգելափակվել է վերջինիս մեղքով՝ բազմակի անհաջող մուտքի փորձերի հետևանքով: Առնվազն տրամաբանական է, որ օգտահաշվի արգելափակումը որևէ պարագայում չէր կարող բխել Հայցվորի շահերից, և վերջինս չէր կարող ինտենսիվ կերպով՝ 354 անգամ սխալ հավաքել իր օգտահաշիվ մուտք գործելու գաղտնաբառը, այն էլ 4 տարբեր՝ նախկինում իր կողմից չօգտագործված համակարգիչներից կամ այլ սարքերից մուտք գործելու փորձեր կատարելով: Նշվածը հաստատվում է նաև ներքոնշյալ փաստերով:

Հատկանշական է, որ Ընթացակարգին մասնակցության հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո շտկված փաստաթղթերը համակարգ մուտքագրելու նպատակով Հայցվորի անունից Ընթացակարգին մասնակցության ապահովման համար պատասխանատու «Սմարթբիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի իրավասու անձի կողմից փորձ է կատարվել մուտք գործելու էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշիվ, և այդ փորձը առաջին անգամ կատարվել է 04.03.2026թ., ժամը 16:52-ին 185.177.104.206 բացառիկ թվային նույնականացնող հասցեով (IP address) համակարգչից, որը, ինչպես վերը նշել ենք, նախկինում օգտագործվել էր Հայցվորի օգտահաշիվ մուտք գործելիս: Փորձը եղել է անհաջող, քանի որ օգտահաշիվն արդեն արգելափակված է եղել: Հայցվորի տնօրենը և «Սմարթբիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի իրավասու անձը չեն հասկացել արգելափակման պատճառը՝ նկատի ունենալով, որ ինչպես նախկինում, այնպես էլ նշված մուտքի ժամանակ օգտագործվել էին նույն մուտքանունն ու գաղտնաբառը: Հայցվորի օգտահաշվի արգելափակման հանգամանքները պարզելու և այն ապարգելափակելու նպատակով «Սմարթբիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի իրավասու անձը +37444993331 հեռախոսահամարից ՀՀ ֆինանսների նախարարության 011 800 600 հեռախոսահամարին զանգ կատարվել է 04.03.2026թ. ժամը 17:52:52-ին, որի շրջանակում դիմողին պարզաբանվել է, որ օգտատիրոջ հաշվի վերականգնման և նույնականացման գործընթացը պատշաճ իրականացնելու

համար անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել գրություն, ինչը հաստատվում է կից ներկայացվող ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի թիվ 03/26-1/12561-2026 գրությամբ: Նկատի ունենալով, որ աշխատանքային ժամն արդեն սպառվում էր, և մոտ 5-6 րոպեում օբյեկտիվորեն հնարավոր էր գրության արագ պատրաստումը և դրան համապատասխան ընթացք տալը նախարարության կողմից (մակագում, կատարում, զեկուցում), գրությունը Հայցվորի կողմից ներկայացվել է 05.03.2026 թվականի առավոտյան: Այդուհանդերձ, «Սմարթբիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի իրավասու անձի կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) Հայցվորի օգտահաշիվ 185.177.104.206 բացառիկ թվային նույնականացնող հասցեով (IP address) համակարգչից փորձ է կատարվել մուտք գործել 04.03.2026թ., ժամը 18:06-ին, 18:21 և 18:22-ին, և բոլոր փորձերը եղել են անհաջող (microsoft excel ֆորմատով էլեկտրոնային ֆայլում, դարձված pdf, Հայցվորի կողմից իր օգտահաշիվ մուտք գործելու անհաջող փորձերը նշել ենք դեղինով): Այնուհետև հասկանալով, որ աշխատանքային ժամի ավարտի պատճառով այլևս հնարավոր չէ մինչև 04.03.2026 թվականի ժամը 23:59-ը ապարգելափակել համակարգում Հայցվորի օգտահաշիվը, քանի որ այն հնարավոր է կատարել միայն ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների միջամտության դեպքում, Հայցվորը ստիպված է եղել շտկված փաստաթղթերի փաթեթն ուղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին, այն է՝ a.arakelyan@promotion.am:

Այսպիսով, արձանագրենք, որ Հայցվորի օգտահաշիվը արգելափակվել է ոչ իր մեղքով, այդ արգելափակման մասին տեղեկանալուց հետո Հայցվորը ձեռնարկել է իրենից կախված և իրեն հասանելի բոլոր միջոցները՝ դրա մասին տեղեկացնելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս ուղարկելով համապատասխան գրություն, իսկ շտկված փաստաթղթերի փաթեթը շտկման համար սահմանված ժամկետը բաց չթողնելու համար ստիպված է եղել ուղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին:

Հաջորդիվ նշեմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ սույն գործով բողոքարկվող որոշումներն անվավեր ճանաչելուց բացի, գտնում եմ, որ անհրաժեշտ է վերացնել նաև դրանց նոր հետևանքը՝ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52Ա/1 հրամանը: Մասնավորապես, նկատենք, որ Հրամանն ընդունվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2026 թվականի որոշմամբ արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու, այն է՝ արձանագրված թերությունների շտկված տարբերակները էլեկտրոնային աճուրդի համակարգի (https://eauction.armeps.am) միջոցով չներկայացնելու պատճառաբանությամբ, ինչը, ըստ Հրամանում առկա տեղեկությունների, արձանագրվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.04.2026 թվականի արձանագրությամբ (որոշումներով), և որը Հրամանով որակվել է որպես գնման գործընթացքում ստանձնած պարտավորության խախտում: Հետևաբար Հրամանն ուղղակի հետևանք է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ սույն գործով բողոքարկվող որոշումների այնքանով, որքանով դրանցով արձանագրվել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2026 թվականի որոշմամբ արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել, ինչի արդյունքում որոշվել է Հայցվորի հայտն անբավարար գնահատել և մերժել, ինչպես նաև նախաձեռնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվորին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց, որն էլ եզրափակվել է Հրամանի ընդունմամբ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.04.2026 թվականի՝ սույն գործով բողոքարկվող որոշումների բացակայության պայմաններում Հրամանը երբևէ չէր ընդունվել, և դրա ընդունման անհրաժեշտությունն ու հիմքն առհասարակ չէին լինի, ուստի հիմնական հայցապահանջի հնարավոր բավարարումն ուղղակիորեն ենթադրում է նաև անվավեր ճանաչվող որոշումների հետևանքների վերացում, որոնցից է նաև Հրամանը:

Նկատի ունենալով բողոքարկվող որոշումների վերոնշյալ նոր հետևանքի առկայությունը՝ հայցի առարկան լրացնում և այն վերաշարադրում եմ հետևյալ բովանդակությամբ. «Դատարանին խնդրում եմ՝

1. Անվավեր ճանաչել «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ին (նիստի արձանագրություն թիվ 3) ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, Ընթացակարգը չկայացած հայտարարելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով Պատվիրատուի ղեկավարին դիմելու, իսկ այդ պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց նախաձեռնելու մասին որոշումները, և որպես այդ որոշումների անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52Ա/1 հրամանը և պարտավորեցնել Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով վերսկսել հայտերի գնահատման նիստը և ՀՀ օրենսդրությամբ ու Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով գնահատել Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, շտկված փաստաթղթերով հայտը:

2. Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի բռնագանձել 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:»:

### 3. Պատասխանողի դիրքորոշումը.

Պատասխանողի ներկայացուցիչը 27.04.2026 թվականին հայցադիմումի պատասխան է ներկայացրել Դատարան, որով մասնավորապես հայտնել է. (…) Ձեր վարույթում է գտնվում թիվ ԵԴ2/4026/02/26 քաղաքացիական գործն ըստ հայցի «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատասխանող), որով Հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի (այսուհետ նաև՝

Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ին (նիստի արձանագրություն թիվ 3) ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, Ընթացակարգը չկայացած հայտարարելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով Պատվիրատուի ղեկավարին դիմելու, իսկ այդ պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց նախաձեռնելու մասին որոշումները, և որպես այդ որոշումների անվավերության հետևանք՝ պարտավորեցնել Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով վերսկսել հայտերի գնահատման նիստը և ՀՀ օրենսդրությամբ ու Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով գնահատել Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, շտկված փաստաթղթերով հայտը:

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական Դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) (Դատավոր՝ Ա. Ծիլաջյան) 17.04.2026 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հիմք ընդունելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 115-րդ հոդվածի 1-ին մասը, 139-րդ, 234.6.-րդ հոդվածի 3-րդ մասը և 234.7.-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն էլեկտրոնային համակարգի միջոցով ստացել ենք 18.04.2026 թվականին, ուստի սահմանված ժամկետում ներկայացնում ենք հայցադիմումի պատասխան հետևյալի մասին:

Այսպես, Հայցվորը վկայակոչելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները, ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալի գրությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 4-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, նույն հոդվածի 2-րդ մասը, 8-րդ հոդվածի 3-րդ մասը, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, 32-րդ հոդվածի 2-րդ մասը, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը, 42-րդ կետը, Ընթացակարգի հրավերի 4.1-ին կետը, 4.3-րդ կետը, 8.11-րդ կետը, այնուհետև՝ ընդունելով էլեկտրոնային աճուրդի համակարգի (https://eauction.armeps.am) միջոցով շտկումը չտալու փաստը, ընդունելով բազմակի անհաջող մուտքի փորձեր կատարելու փաստը՝ հղում կատարելով ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի N 03/26-1/5742-2026 գրությանը, եզրահանգել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված հանգամանքների հաշվառմամբ պարտավոր էր ընդունել Հայցվորի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը և շարունակել հայտերի գնահատումը, մինչդեռ ոչ իրավաչափորեն մերժել է Հայցվորի հայտը:

Անհրաժեշտ փաստել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած բոլոր որոշումները եղել են իրավաչափ, հիմնավորված և պատճառաբանված, ինչպես նաև բխել են գնումների գործընթացը կարգավորող բոլոր իրավական նորմերի պահանջներից, այդ թվում՝ ՀՀ Կառավարության 18.07.2017 թվականի 534-Ն որոշման պահանջներից, որով կարգավորվում է էլեկտրոնային աճուրդի իրականացման գործընթացը:

Գնահատող հանձնաժողովն ունենալով պարտականություն՝ գնահատելու Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերը՝ մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություններ, որոնց վերաբերյալ էլեկտրոնային համակարգի միջոցով շտկման ծանուցում է հասցեագրվել մասնակցին, ով դրսևորել է անգործություն և էլեկտրոնային համակարգի միջոցով չի ներկայացրել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները: Ընդ որում, էական նշանակություն ունի այն փաստը, որ թե՛ Հայցվորը և թե՛ ՀՀ Ֆինանսների նախարարությունն նշել են այն հանգամանքը, որ Հայցվորի համակարգի արգելափակումը եղել է հենց՛ Հայցվորի կողմից բազմակի անգամ մուտք գործելու անհաջող փորձերը: Այսինքն, Հայցվորի այն պնդումը, որ շտկում չտրամադրելը արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով է և վերջինս մեղք չունի առաջացած իրավիճակի համար՝ անհիմն է և առարկայազուրկ: Հենց Հայցվորը իր ներկայացրած դիրքորոշումներով ընդունել է իր մեղավորությունը, նշելով, որ համակարգն արգելափակվել է իր կողմից բազմակի անհաջող մուտքի փորձերի արդյունքում: Բացի այդ, ներկայացված հայցադիմումով այդպես էլ չի վկայակոչվել գնումների գործընթացը կարգավորող այնպիսի օրենք կամ ենթաօրենսդրական ակտ, որի պահանջները Պատասխանողը խախտել է: Ընդհակառակը, եթե Պատվիրատուն հիմք ընդուներ ներկայացված փաստաթղթերը, ապա կխախտեր մի շարք իրավական նորմերի պահանջներ: Հետևաբար, այն պայմաններում, երբ մասնակցի ոչ բարեխիղճ գործողությունների արդյունքում արգելափակվել է իր իսկ համակարգը, ապա դա որևէ կերպ չի կարող որակվել Պատասխանողի ոչ իրավաչափ գործողության արդյունք: Հակառակ մեկնաբանության դեպքում կխախտվի էլեկտրոնային աճուրդի իրականացման հետ կապված բոլոր իրավական նորմերի պահանջները: Առավել առարկայազուրկ կդառնա մի ամբողջ ենթաօրենսդրական ակտի գոյությունը, որովհետև ՀՀ Կառավարությունը 18.07.2017 թվականի 534-Ն որոշմամբ կարգավորում է էլեկտրոնային աճուրդի իրականցման գործընթացը և դրանում առկա իրավակարգավորումները չկիրառելու պարագայում անիմաստ է դառնում առհասարակ դրա գոյությունը

(...)

«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 06.04.2017 թվականի 386-Ն որոշման էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի 5-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝ տեխնիկական սպասարկող՝ համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն կամ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության կողմից ընտրված իրավաբանական անձ:

Ընթացակարգի հրավերի 8.11.-րդ կետի համաձայն՝ (...) Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Նշվածի համատեքստում հարկ ենք համարում արձանագրել, որ վերը հիշատակված իրավակարգավորումների և հրավերի պահանջների հաշվառմամբ, Պատվիրատուն իրավասություն չուներ «Իմպեքսո» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը հիմք ընդունելու, որովհետև դրանով կխախտվեր էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգն

այն պարզ պատճառով, որ էլեկտրոնային աճուրդի դեպքում բոլոր փաստաթղթերը ներկայացվում են համակարգի միջոցով, իսկ տվյալ դեպքում ներկայացվել է էլեկտրոնային փոստի միջոցով: Ավելին՝ փաստաթղթերը հիմք ընդունելու դեպքում Պատվիրատուն կխախտեր Ընթացակարգի հրավերի 8.11.-րդ կետի պահանջներն, քանի որ այդ կետում նշված է, որ եթե գնահատող հանձնաժողովի սահմանած ժամկետում մասնակիցը համակարգի միջոցով չի ներկայացնում շտկման ենթակա փաստաթղթերը, ապա «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա Ընթացակարգը հայտարարվում է չկայացած, որը և տվյալ դեպքում իրականացվել է:

Անդրադարձ կատարելով Հայցվորի այն պնդմանը, որ քաղաքացիական իրավահարաբերություններում պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պարտապանի պատասխանատվությունն առաջանում է վերջինիս մեղքի առկայության դեպքում, ապա այս մասով էլ կրկին անգամ անհրաժեշտ ենք համարում փաստել, որ ստեղծված իրավիճակում Հայցվորի մեղքն առկա է և ըստ էության ընդունում է դա, իսկ սույն հայցադիմումով էլ փորձում է վերացնել իր իսկ կողմից թույլ տրված անփութությունների հետևանքները: Այլ կերպ ասած՝ Հայցվորը մոռացել է համակարգ մուտք գործելու մուտքանունը և/կամ գաղտնաբառը, այնուհետև՝ բազմակի անգամներ փորձեր է կատարել մուտք գործելու, որից հետո համակարգն արգելափակվել է: Ուստի, հարց է առաջանում, Պատվիրատուի մեղքը ստեղծված իրավիճակում ո՞րն է: Ընդ որում, եթե առաջնորդվենք Հայցվորի տրամաբանությամբ, ապա կարող են լինել նմանատիպ բազմաթիվ իրավիճակներ և մասնակիցներն էլ դրսևորեն նման անբարեխիղճ վերաբերմունք գնումների գործընթացի կազմակերպման կարգի նկատմամբ և նման վարքագծով խաթարեն ամբողջ գործընթացը՝ ինչն որևէ կերպ իրավաչափ համարվել չի կարող:

Ինչ վերաբերում է ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ներկայացված դիրքորոշմանը, ապա այս մասով էլ հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված գրությանն ի պատասխան խնդրել ենք հայտնել, թե օրենսդրական հիմքը և հիմնավորումը ո՞րն է, որին ի պատասխան չի տրամադրվել այնպիսի հիմնավորում և չի վկայակոչվել այնպիսի օրենսդրական հիմք, որով առաջնորդվելու պայմաններում հնարավոր կլիներ ներկայացված փաստաթղթերը գնահատել:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում անդրադարձ կատարել այն հանգամանքին, որ «Իմպեքսո» ՍՊԸ-ի օգտահաշիվը՝ բազմակի անհաջող մուտքի փորձերի արդյունքում արգելափակվել է 03.03.2026 թվականի ժամը 11:30-ից և վերջինս այդ օրը և հաջորդ օրը դրսևորել է անգործություն և հետամուտ չի եղել իր իսկ համակարգի տեխնիկական խնդիրները վերացնելու ուղղությամբ: Ընդ որում, Օրենքով և Կարգով չի նախատեսվել որևէ պայման այն մասին, որ համակարգի միջոցով փաստաթղթեր ներկայացնելու հնարավորության բացակայության պայմաններում դրանք կարող են ներկայացվել էլեկտրոնային փոստի միջոցով:

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը, գալիս ենք այն հետևությանը, որ Հայցվորը դրսևորել է անփութություն՝ մոռանալով սեփական գաղտնաբառը, այնուհետև՝ բազմաթիվ անգամ սխալ գաղտնաբառ մուտքագրելու արդյունքում արգելափակել համակարգը և շուրջ երկու աշխատանքային օր ունենալով այդ խնդիրը վերացնելու ուղղությամբ՝ չի դիմել ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

Փաստերի նման դասավորվածության պայմաններում գալիս ենք այն իրավաչափ հետևությանը, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են գնումների գործընթացը կարգավորող բոլոր իրավական նորմերի պահանջները և «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին էլ տրվել է հնարավորություն, որպեսզի վերացնի առկա

թերությունները, որը սահմանված ժամկետում չի վերացրել:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք «Իմպեքսո» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ամբողջությամբ մերժել:

Պատասխանողի ներկայացուիչը 05.06.2026 թվականին ներկայացված հայցադիմումի պատասխանով մասնավորապես հայտնել է.

«Ձեր վարույթում է գտնվում թիվ ԵԴ2/4026/02/26 քաղաքացիական գործն ըստ հայցի «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատասխանող), որով Հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ին (նիստի արձանագրություն թիվ 3) ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, Ընթացակարգը չկայացած հայտարարելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով Պատվիրատուի ղեկավարին դիմելու, իսկ այդ պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց նախաձեռնելու մասին որոշումները, և որպես այդ որոշումների անվավերության հետևանք՝ պարտավորեցնել Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին «ԲԿԳԿԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով վերսկսել հայտերի գնահատման նիստը և ՀՀ օրենսդրությամբ ու Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով գնահատել Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, շտկված փաստաթղթերով հայտը: 17.04.2026 թվականին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական Դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) (Դատավոր՝ Ա. Շիլաջյան) որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին: 25.05.2026 թվականին Դատարանը որոշում է կայացրել «Պետական տուրքի վճարումը հետաձգելու և հայցի հիմքի և առարկային փոփոխությունը թույլատրելու մասին»

02.06.2026 թվականին Դատարանը որոշում է կայացրել «Գործի քննության ժամկետը երկարաձգելու մասին»՝ եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելով 2026 թվականի հունիսի 12-ին:

Հիմք ընդունելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 115-րդ հոդվածի 1-ին մասը, 139-րդ, 234.6.-րդ հոդվածի 3-րդ մասը և 234.7.-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանի 25.05.2026 թվականի «Պետական տուրքի վճարումը հետաձգելու և հայցի հիմքի և առարկային փոփոխությունը թույլատրելու մասին» որոշումը էլեկտրոնային դատավարության համակարգով ստացել ենք 03.06.2026 թվականին /հիմք՝ կից ներկայացված արտատպումները/, ուստի ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ներկայացնում ենք փոփոխված հայցի հիմքի և առարկայի վերաբերյալ հայցադիմումի պատասխան:

Այսպես, Հայցվորը ներկայացված միջնորդությամբ Դատարանին հայտնել է, որ 15.04.2026 թվականին, էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի

«Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52Ա/1 հրամանը և փոփոխված հայցապահանջով վիճարկում է նաև այդ հրամանը: Նաև նշել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգով (այսուհետ՝ Կարգ) և Ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի գնահատման ժամկետները: Ինչպես նաև անդրադարձ անդրադարձ կատարելով վեջինիս օգտահաշվի արգելափակման հանգամանքին, նշել է, որ դիմել է լիազոր մարմնին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն վերջինիս օգտահաշվի արգելափակված լինել և/կամ չլինելու վերաբերյալ, որին ի պատասխան ստացել է գրություն, որով լիազոր մարմինը ի թիվս այլնի հայտնել է, որ «... էլեկտրոնային գնումների համակարգում որպես մատակարար գրանցված ընկերության օգտատիրոջ էջն համակարգի կողմից ավտոմատ կերպով ապակտիվացվում է միայն այն դեպքում, երբ ARMEPS համակարգում իրականացվում է անընդմեջ առավելագույնը թվով 10 անհաջող մուտքի փորձ՝ ճիշտ մուտքանվան և սխալ գաղտնաբառի համակցությամբ...»: Այնուհետև՝ հավելել է, որ Հայցվորի տնօրենը և «Սմարթթիդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի իրավասու անձը չեն հասկացել արգելափակման պատճառը՝ նկատի ունենալով, որ ինչպես նախկինում, այնպես էլ նշված մուտքի ժամանակ օգտագործվել էին նույն մուտքանունն ու գաղտնաբառը՝ եզրահանգելով, որ Հայցվորի օգտահաշիվը արգելափակվել է ոչ իր մեղքով, այդ արգելափակման մասին տեղեկանալուց հետո Հայցվորը ձեռնարկել է իրենից կախված և իրեն հասանելի բոլոր միջոցները՝ դրա մասին տեղեկացնելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս ուղարկելով համապատասխան գրություն, իսկ շտկված փաստաթղթերի փաթեթը շտկման համար սահմանված ժամկետը բաց չթողնելու համար ստիպված է եղել ուղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին: Արդյունքում, Հայցվորը Դատարանից խնդրել է՝ (...)

1. Անվավեր ճանաչել «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ին (նիստի արձանագրություն թիվ 3) ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, Ընթացակարգը չկայացած հայտարարելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով Պատվիրատուի ղեկավարին դիմելու, իսկ այդ պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց նախաձեռնելու մասին որոշումները, և որպես այդ որոշումների անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ.Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52Ա/1 հրամանը և պարտավորեցնել Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով վերսկսել հայտերի գնահատման նիստը և ՀՀ օրենսդրությամբ ու Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով գնահատել Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, շտկված փաստաթղթերով հայտը:

2. Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի բռնագանձել 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար (...)»:

Անհրաժեշտ է փաստել, որ Հայցվորի կողմից ներկայացված բոլոր փաստարկներն անհիմն են և չեն կարող հանգեցնել վիճարկվող որոշումների անվավերությանն այն պարզ պատճառով, որ Պատվիրատուն առաջնորդվել է բացառապես գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերի իմպերատիվ պահանջներով: Նշված դիրքորոշման համար հիմք են հանդիսանում ստորև ներկայացված պատճառաբանությունները և սույն Պատասխանին կից ներկայացված ապացույցները:

Նախ, անդրադարձ կատարելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52Ա/1 հրամանն անվավեր ճանաչելու պահանջին, հարկ ենք համարում արձանագրել, որ այդ պահանջն առհասարակ առարկայազուրկ է, քանի որ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի կողմից 28.04.2026 թվականին արձակվել է ևս մեկ հրաման՝ «Բարձրագույն Կրթության և Գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2026 թվականի ապրիլի 13-Ի N 52-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»: Նշված հրամանն արձակելու համար հիմք է հանդիսացել ՀՀ Ֆինանսների նախարարության 2026 թվականի ապրիլի 23-ի N 12/12-1/10950-2026 գրությունը, որով ՀՀ Ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ թիվ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ պետական բյուջեի թիվ 900008000466 հաշվին հայտի ապահովման համար 17.02.2026 թվականին փոխանցված 8,205,000.00 դրամը գանձվել է ՀՀ պետական բյուջեի թիվ 900005000741 հաշվեհամարին՝ կից ներկայացնելով վճարման անդորրագիրը: Այլ կերպ ասած՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում թույլ տրված լինելու հանգամանքը՝ 02.04.2026 թվականի արձանագրությամբ վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատել է որպես անբավարար և մերժել, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով դիմել է Պատվիրատուի ղեկավարին: Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ հիշյալ իրավական նորմի պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով: Այսինքն, հստակ արձանագրվել է, որ Օրենքի 32-րդ հոդվածի, այն է՝ հայտի ապահովման գանձման անհնարինության դեպքում նոր միայն մասնակիցը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վերոգրյալ պահանջներն իրագործելու նպատակով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտի ապահովումը ներկայացված է եղել կանխիկ փողի տեսքով, Պատվիրատուն 06.04.2026 թվականին գրություն է հասցեագրել ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանին՝ խնդրելով իրականացնել վճարված հայտի ապահովման գանձումը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 900005000741 հաշվեհամարին և այդ դեպքում նույնպես տեղեկացնել Պատվիրատուին: Պատվիրատուն մինչև 13.04.2026 թվականը ՀՀ Ֆինանսների նախարարությունից չստանալով հայտի ապահովման գանձման գրության պատասխանը, ստիպված է եղել կայացնել որոշում՝ «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու մասին, քանի որ այդ պարտականությունն ամրագրված է Կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետով: Մասնավորապես՝ այդ իրավական նորմով նախատեսվել է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Տվյալ դեպքում, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե կարիքների համար ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել էր 02.04.2026 թվականին և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 12.04.2026 թվականը եղել է ոչ աշխատանքային օր, Պատվիրատուն ստիպված է եղել այդ հրամանն արձակել 13.04.2026 թվականին՝ ուղարկելով լիազոր մարմնին և մասնակցին: Այնուհետև՝ 15.04.2026 թվականին Պատվիրատուն ստացել է ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը, որով լիազոր մարմինը հայտնել է, որ բարձրացված հարցադրման վերաբերյալ կարգավորումները նախատեսված են «Գնումների մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով և «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.5 կետով: Նշված պատասխանը ստանալուց հետո, Պատվիրատուն ստիպված է եղել կրկին գրություն հասցեագրել լիազոր մարմնին՝ ևս մեկ անգամ խնդրելով իրականցնել «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի տեսքով ներկայացված 8,205,000.00 (ութ միլիոն երկու հարյուր հինգ հազար) ՀՀ դրամի չափով հայտի ապահովման գումարի գանձումը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 900005000741 հաշվեհամարին: Այնուհետև՝ միայն երկրորդ գրության հիման վրա՝ այն է 23.04.2026 թվականին, լիազոր մարմինը պատասխանել է, որ հայտի ապահովման գանձումն հաջողվել է և թիվ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ պետական բյուջեի թիվ 900008000466 հաշվին հայտի ապահովման համար 17.02.2026 թվականին փոխանցված 8,205,000.00 դրամը գանձվել է ՀՀ պետական բյուջեի թիվ 900005000741 հաշվեհամարին՝ կից ներկայացնելով վճարման անդորրագիրը: Նման պայմաններում, Պատվիրատուն ստիպված է եղել արձակել ևս մեկ հրաման՝ «Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2026 թվականի ապրիլի 13-ի n 52-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին», քանի որ հայտի ապահովման գանձման փաստի առկայությունը բացառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը: Դրանով պայմանավորված և Կարգի 29-րդ կետի բ) ենթակետով նախատեսված պարտականությունն իրագործելու նպատակով Պատվիրատուն գումարի գանձման մասին գրավոր տեղեկացրել է լիազոր մարմնին, որի հիման վրա էլ մասնակիցը չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որպիսի եզրահանգմանն ենք գալիս նաև տեղեկագրում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակի ուսումնասիրությունից ևս: Ինչ վերաբերում է Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված այն փաստարկներին, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են հայտի գնահատման ժամկետները, ապա այս մասով էլ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

Գնումների պաշտոնական կայքում Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակվել են 05.02.2026 թվականին և հայտերի ներկայացման վերջնաժամկետը եղել է 17.02.2026 թվականին, որից էլ հաշված տասնհինգերորդ աշխատանքային օրը

10.03.2026 թվականն է: Տվյալ դեպքում, հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովը ստացել է «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի գրությունը, որով վերջինս հայտնել է, որ անհնարինություն է առկա՝ կապված համակարգով շտկման ենթակա փաստաթղթերը ներկայացնելու հետ: Գնահատող հանձնաժողովը չունենալով ժամկետ ներկայացված գրությամբ բարձրացված փաստերի իսկության մեջ հավաստիանալու համար, ստիպված է եղել կասեցնել գնման գործընթացը՝ մինչև մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության ավարտը: Բացի այդ, 09.03.2026 թվականին էլ ստացվել է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանին ուղղված ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալի գրությունը, որով էլ լիազոր մարմինը գտել է, որ գնահատող հանձնաժողովը կարող է հիմք ընդունել քարտուղարի էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը և հրավերով սահմանված կարգով համակարգում շարունակել հայտի գնահատումը, համոզվելով, որ էլեկտրոնային ստորագրությունները վավեր են, իսկ փաստաթղթերը ստորագրված են շտկման համար նախատեսված ժամանակահատվածում:

Պատվիրատուն հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազոր մարմինը տրամադրել է նման կարծիք, որն ըստ Պատվիրատուի չի բխել Օրենքի և Կարգի պահանջներից, ստիպված է եղել լիազոր մարմնից լրացուցիչ հիմնավորումներ պահանջել: Մասնավորապես՝ 09.03.2026 թվականի գրությանն ի պատասխան՝ 11.03.2026 թվականին, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի կողմից ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Գաբրիելյանին գրություն է հասցեագրվել, որով վկայակոչելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշման էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի 5-րդ կետի 6-րդ ենթակետը, Ընթացակարգի հրավերի 8.11.-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածը, նույն հոդվածի 2-րդ մասը, ՀՀ Կառավարության «Օրենսդրական ակտի և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տվող պետական կառավարման համակարգի մարմինների և համապատասխան բնագավառների ցանկը սահմանելու մասին» N 1159-Ն որոշման 3-րդ կետի 1- ին ենթակետը, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, խնդրել է ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, ինչպես նաև մատնանշել իրավական ակտ(եր) այն մասին, որ գնահատող հանձնաժողովն իրավասու է հիմք ընդունել գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկված փաստաթղթերը և հրավերով սահմանված կարգով համակարգում շարունակել հայտի գնահատումը: Նշված գրությամբ, ինչպես նաև ևս մեկ գրությամբ լիազոր մարմինը կրկին պնդել է իր դիրքորոշումը և որևէ կերպ չի վկայակոչել այն օրենսդրական հիմքը, ինչպես նաև հիմնավորումը, որի պահանջներով առաջնորդվելու դեպքում հնարավոր կլիներ հիմք ընդունել մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը: Արդյունքում, գնահատող հանձնաժողովը 02.04.2026 թվականին վերսկսել է նիստը և մերժել «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը: Այսինքն, գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելը առաջինը բխել է հենց Հայցվորի շահերից, քանի որ նպատակ է հետապնդել ուսումնասիրելու ուղարկված գրությունը: Նման պայմաններում, գնահատող հանձնաժողովի նիստը կասեցված լինելու հանգամանքի հաշվառմամբ չի կարող փաստարկ ներկայացվել այն մասին, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է հայտերի գնահատման ժամկետները:

Անհրաժեշտ է փաստել, որ գնումների գործընթացը կարգավորող որևէ

իրավական ակտով Պատվիրատուն իրավասություն չուներ էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը հիմք ընդունելու և գնահատելու, որին լիազոր մարմինն առհասարակ այդպես էլ որևէ անդրադարձ չկատարեց և պնդեց իր դիրքորոշումը, որով Պատվիրատուն առաջնորդվել պարզապես չէր կարող այն պարզ պատճառով, որ մի ամբողջ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով ՀՀ Կառավարությունը հաստատել է կարգ, որի պահանջները Պատվիրատուն խախտել չէր կարող: Հարկ է հավելել, որ առկա են բազմաթիվ դատական գործեր, որոնցով Դատարանն հստակ արձանագրել է, որ որոշում կայացնելու բացառիկ իրավասությունը վերապահված է հանձնաժողովին և/կամ պատվիրատուին, իսկ իրավասու մարմինների կողմից տրամադրվող փաստաթղթերը, եզրակացությունները ունեն բացառապես օժանդակող և խորհրդատվական բնույթ: Մասնավորապես՝ թիվ ԵԴ2/0369/02/24 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճռով արձանագրվել է, որ «…Ինչ վերաբերում է Պատասխանողի այն փաստարկին, որ գնումների օրենսդրության համակարգումն իրականացնող պետական լիազոր մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ուղարկված թիվ 01.1/26-1/10085-2022 գրությունը, որն իրենից ներկայացնում է շրջաբերական, որով սահմանված է պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման ձևաչափը, որը պետք է պարունակի պահանջվող տեղեկությունները, ապա Դատարանն հարկ է համարում արձանագրել, որ Պատասխանող կողմն առաջին հերթին պետք է ղեկավարվի Օրենքի պահանջներով, այնուհետև հիմք ընդունի շրջաբերականները …»:

(…)

Այս մասով Հայցվորի ամբողջ փաստարկը կայանում է նրանում, որ անհաջող փորձերը կատարվել են այլ անձի կողմից և վերջինիս մեղքը բացակայում է: Նշվածի հիմնավորում և ապացույց մասնակիցը ներկայացրել է լիազոր մարմնի դիրքորոշումն ու տրամադրված նույնականացվող հասցեները (IP address), որոնց հղում կատարելով Հայցվորի ներկայացուցիչը պնդել է, որ Հայցվորի մեղքը բացակայում է և անհաջող մուտքերն էլ ինքը չի կատարել:

Անհրաժեշտ է փաստել, որ այդ փաստարկն ամբողջությամբ անհիմն է և սույն գործի լուծման համար էական նշանակություն ունենալ չի կարող այն պարզ պատճառով, որ Հայցվորը կարող էր նաև այլ նույնականացվող հասցեներով (IP address) անհաջող մուտքեր կատարել և նման պայմաններում ներկայացված փաստարկներով և ապացույցներով չի կարող հիմնավորվել և ապացուցվել վերջինիս մեղքի բացակայությունը: Միայն այն փաստը, որ անհաջող մուտքերը չի կատարվել այն համակրգչից, որի միջոցով ներկայացվել է հայտը՝ չի կարող էական նշանակություն ունենալ և դրանով չի կարող հաստատվել վերջինիս մեղքի բացակայությունը՝ նույն հաջողությամբ Հայցվորի կողմից այլ համակարգչով կարող էր անհաջող մուտքեր կատարվել: Ուստի, Հայցվորի փաստարկներն այս մասով ևս անհիմն են: Բացի այդ, հատկանշական է այն փաստը, որ մասնակցի համակարգն արգելափակվել է 03.03.2026 թվականին ժամը 11:30-ից և այդ օրը, ինչպես նաև հաջորդ օրն ամբողջությամբ մասնակիցը հնարավորություն է ունեցել դիմելու ՀՀ Ֆինանսների նախարարությանը և ստանալու նոր մուտքանուն և գաղտնաբառ, սակայն դրսևորել է կատարյալ անգործություն և միայն դիմել է 05.03.2026 թվականին: Այսինքն, գրեթե երկու աշխատանքային օր ամբողջությամբ Հայցվորի կողմից դրսևորվել է անգործություն: Ընդ որում, 05.03.2026 թվականին դիմելուց հետո լիազոր մարմինը մուտքանուն և գաղտնաբառ տրամադրել է ընդհամենը մի քանի ժամվա ընթացքում, այն է՝ ժամը 12:30-ին, որի մասին է նշվել հենց Հայցվորը: Ակնհայտ է, որ Հայցվորի ամբողջ փաստարկների նպատակը կայանում է նրանում, որ փորձում է ոչ էական փաստական հանգամանքներով արդարացնել իր իսկ կողմից

դրսևորված ոչ իրավաչափ անգործությունը: Միևնույն ժամանակ հարկ ենք համարում ևս մեկ անգամ անդրադարձ կատարել այն հանգամանքին, որ երրորդ անձը որևէ ձևով՝ առնվազն բաց աղբյուրներից, չէր կարող տեղեկանալ Հայցվորի համակարգի մուտքանունը՝ որպեսզի կատարեր բազմակի մուտքեր և դիտավորյալ արգելափակել համակարգը: Ընդ որում, եթե նույնիսկ երրորդ անձի կողմից է արգելափակվել Հայցվորի համակարգը, ապա դա ևս Հայցվորի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում կարող էր լինել, որովհետև այլ կերպ երրորդ անձը չէր կարող տիրապետել Հայցվորի մուտքանվանը, այնուհետև սխալ գաղտնաբառերով արգելափակեր համակարգը:

(...)

Ելնելով վերոգրյալից, խնդրում ենք «Իմպեքստ» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ամբողջությամբ մերժել:»:

**4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

**4.1.** Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գնահատող հանձնաժողովի 04.02.2026 թվականի որոշմամբ հաստատված հրավերի և հայտարարության համաձայն՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով էլեկտրոնային աճուրդ Armeps (eauction.armeps.am) համակարգի միջոցով հայտարարվել է թիվ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով աճուրդ:

Էլեկտրոնային աճուրդի մասին հայտարարության համաձայն՝ ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 12-րդ օրվա ժամը12:00-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 12-րդ օրվա ժամը12:00-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հրավերի 1-ին մասի 4.3. կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակ¬ցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերովսահմանված կարգով և ժամկետում որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության կամ սույն հրավերվ սահմանված՝ վարկունակության վարկանիշ ունենալու մասին

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան); Ընդ որում՝

- 1.2 հավելվածը ներկայացնում է ՀՀ ռեզեդենտ չհանդիսացող մասնակիցը.

- 1.3 հավելվածը ներկայացնում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է.

- դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում.Եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հավելվածը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

2) գնային առաջարկ, որը ներկայացվում է համակարգի միջոցով: Գնային առաջարկի ներկայացման կարգը և պայմանները սահմանված են սույն հրավերի 1-ին մասի 5-րդ և 2-րդ մասի 2-րդ բաժնով.

3) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդել, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով: Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում, մոդել ունեցող ապրանքներ: եթե չի կիրառվում սույն մասի 1.1 կետի վերջին նախադասությամբ սահմանված պայմանը 2

4) հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացվելու դեպքում մասնակիցը հայտում ներառում է դրա վճարումը հավաստող փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը3

5) գործակալության պայմանագրի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

6) համատեղ գործունեության պայմանագրի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է

հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից.

Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) սույն ընթացակարգին մասնակցելու դեպքում՝

համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին: Այն դեպքում, երբ համատեղ գործունեության պայմանագրով նախատեսվում է, որ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, ապա պայմանագիր կնքվելու դեպքում դրա հիման վրա վճարումները կատարվում են հայտը ներկայացրած մասնակցին:

Հայտում ներառված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին և հայտեր ներկայացրած մասնակիցներին հասանելի է դառնում բացառապես աճուրդի արդյունքներն ամփոփելուց հետո՝ ավտոմատ եղանակով:

Հրավերի 8.1. կետի համաձայն՝ Սույն հրավերով սահմանված՝ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին և գնահատող հանձնաժողովի բոլոր անդամներին միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը՝ առանց ավելացված արժեքի հարկի գումարի, ըստ չափաբաժինների էլեկտրոնային աճուրդը սկսելու օրը և ժամը, ինչպես նաև օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալները: Եթե սույն ընթացակարգը բողոքարկվել է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը և առկա չէ ընթացակարգի կասեցումը հանելու մասին դատարանի որոշում, ապա սույն կետով նախատեսված տեղեկատվությունը համակարգը մասնակիցներին ուղարկում է բողոքի վերաբերյալ կայացված որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Ընդ որում անկախ ընթացակարգը կասեցված լինելու հանգամանքից, մասնակիցներն ունեն մինչև սույն հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը հայտեր ներկայացնելու, ներկայացված հայտերըւ փոխելու կամ հետ վերցնելու հնարավորություն:

Հրավերի 8.2. կետի համաձայն՝ Էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2026.02.18. 12:00-ին: Եթե աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո:

**4.2.** «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2026 թվականին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2. կետի համաձայն՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով ի թիվս այլոց գնման ընթացակարգին հայտ

է ներկայացրել «Իմպեքսո ՍՊ ընկերությունը:

Արձանագրության 2.3 կետի համաձայն՝ Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

«Իմպեքսո» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.3-ով ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ղիմամբ հայտարարագիրը ներկայացված է 2025 թվականին, սակայն պետք է ներկայացված լինի 2026 թվականի համար, ինչպես նաև հայտով ներկայացվող առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի փաստաթղթում.

• «Ձեքրաձկան կենսունակությունը և վարքագիծը գնահատող համակարգ» չափաբաժնի «1.7 Ծերեփուկների դիտարկման խցիկ՝ տեսախցիկով և ներդրված լուսային բլոկով» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ «Դիտարկման խցիկում տեսախցիկի հեռավորությունը պետք է լինի օբյեկտից ոչ պակաս, քան 30 սմ՝ առանց պարալաքս խնդիրների կամ օկլյուզիաների 96 տեղանոց պլանշետներում», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ «Դիտարկման խցիկում տեսախցիկի հեռավորությունը պետք է լինի օբյեկտից 30 սմ-ից պակաս օբյեկտից, առանց պարալաքս խնդիրների կամ օկլյուզիաների 96 տեղանոց պլանշետներում», ինչպես նաև «1.10 Մանրադիտակ՝ տեսախցիկով» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ «Միջակնային ճշգրտում Siedentopf-ի չփոխհատուցվող մեթոդով՝ 55-75 մմ», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկականն բնութագրում ներկայացվել է՝ «Միջակնային ճշգրտում\gamel առանց փոխհատուցման Zidentop-fa,՝ 55-75 մմ»:

• «Ձեքրաձկան պահպանման համակարգ՝ լրակազմով» չափաբաժնի «1.3 Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ ֆիլտրեր, պահեստային մասեր, աքսեսուարներ» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ «Արտեմիայի ցիստեր՝ 1 կգ», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ «Ծովախեցգետնի կիստաներ՝ 1 հատ» ձևակերպումը:

• «Արդյունաբերական լվացքի մեքենա» չափաբաժնի «1.3 Կոնստրուկցիա/նյութեր» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ Արտաքինը՝ չժանգոտվող պողպատ՝ AISI 304 Scotch Brite finish Ra<40µin (Rad.2µm) տեսակի կամ համարժեք: Լվացքի խցիկը և դռները AISI 316L BA Ra<30 µin (Ra<0.8 µm) տեսակի պողպատից են կամ համարժեք, իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ Արտաքինը՝ չժանգոտվող պողպատ՝ AISI 304 Scotch Brite finish Ra «40µin (Ra«1.2µm): Լվացքի խցիկը և դռները AISI 316L BA Ra «30µin (Ra«0.8µm) տեսակի պողպատից են, ինչպես նաև «1.14 Շրջակա միջավայր» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է «Համարժեք աղմուկի ճնշման մակարդակ՝ < 70 դԲ (A)», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ «Համարժեք աղմուկի ճնշման մակարդակ՝ « 70 դԲ (A)» ձևակերպումը (<-ի փոխարեն կիրառվել է « նշանը):

1. Արձանագրության 3.2. կետի համաձայն՝ որոշվել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

«Իմպեքսո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի

ուսումնասիրության նպատակով 2026թ. մարտի 11-ին Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգը հայտարարել կասեցված մինչև ուսումնասիրության ավարտը:

**4.3.** «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.04.2026 թվականին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ հանձնաժողովը արձանագրել է որ «Իմպեքսո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Փաստաթղթերում 2026 թվականի փետրվարի 18-ին արձանագրվել էին անհամապատասխանություններ, որով պայմանավորված և Կարգի 41-րդ կետի կիրառմամբ 2026 թվականի մարտի 3-ին Հանձնաժողովը որոշել էր նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունները:

Նիստը կասեցնելուց հետո «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում համակարգի https://eauction.armeps.am/ միջոցով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Հանձնաժողովը որոշել է՝

«ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության հայտը գնահատել որպես անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետով սահմանված պահանջները:

**4.4.** «Gmail» կայքի արտատպվածքի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը «no-reply@eauction.armeps.am» էլ. հասցե միջոցով «impexso.company@gmail.com» էլ. հասցեին 03.03.2026 թվականին ժամը 17:52-ին ուղարկել է «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերտառությամբ գրությունը, որում նշվել է հայտում արձանագրված թերությունները:

**4.5.** «Gmail» կայքի արտատպվածքի համաձայն՝ «Իմպեքսո» ՍՊ ընկերությունը «impexso.company@gmail.com» էլ. հասցե միջոցով «a.arakelyan@promotion.am» էլ. հասցեին 04.03.2026 թվականին ուղարկել է «Լիազորագիր.pdf», «Իմպեքսո_signed.pdf», «Հավելված 1,3_signed.pdf», «հավելված 1.1_signed.pdf» վերտառությամբ էլեկտրոնային ֆայլերը:

**4.6.** ՀՀ Ֆինանսների նախարարության նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանին ուղղված թիվ 03/26-1/5742-2026 գրությամբ մասնավորապես հայտնել է.

«Էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Իմպեքսո» ՍՊԸ-ին ավտոմատ ծանուցման եղանակով 03/03/2026թ. ժամը 17:52-ին ուղարկվել է մասնակցության հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման պահանջ: Համակարգում շտկման ժամանակահատված է սահմանվել՝ 03/03/2026թ. ժամը 17:52-ից մինչև 04/03/2026թ. ժամը 23:59-ը:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ համակարգում «Իմպեքսո» ՍՊԸ-ի օգտահաշիվը՝ բազմակի անհաջող մուտքի փորձերի արդյունքում, 03/03/2026թ. ժամը 11:30-ից մինչ 05/03/2026թ. ժամը 12:30-ը արգելափակված է եղել, ինչի արդյունքում մասնակիցը չի ունեցել համակարգի միջոցով շտկված փաստաթղթերը ներկայացնելու հնարավորություն:

Մասնակիցը 05/03/2026թ. դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը նոր

գաղտնաբառ տրամադրելու համար, իսկ 06/03/2026թ. գրությամբ (կցվում է) հայտնել է, որ փաստաթղթերի շտկման համար սահմանված ժամկետում, հաշվի առնելով, որ օգտահաշիվը եղել է արգելափակված, էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերն ուղարկել է գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին:

Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից աշխատանքային կարգով տրամադրված՝ շտկված փաստաթղթերը (կցվում են) էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված են շտկման համար սահմանված ժամկետում, ինչպես նաև, որ դրանք քարտուղարին ուղարկվել են մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը, գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը կարող է հիմք ընդունել քարտուղարի էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը և հրավերով սահմանված կարգով համակարգում շարունակել հայտի գնահատումը, համոզվելով, որ էլեկտրոնային ստորագրությունները վավեր են, իսկ փաստաթղթերը ստորագրված են շտկման համար նախատեսված ժամանակահատվածում:»:

**4.7.** ՀՀ Ֆինանսների նախարարության նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանը փաստաբան Դ. Հովսեփյանին ուղղված թիվ 03/26-1/12561-2026 գրությամբ մասնավորապես հայտնել է.

«Ի պատասխան Ձեր սույն թվականի մայիսի 06-ի թիվ 1964649 և 1966448 գրությունների՝ հայտնում ենք, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգին «Իմպեքսո» ՍՊԸ-ի կողմից մասնակցության հայտը ներկայացվել է 16/02/2026թ. ժամը 20:10:41-ին:

Հայտնում ենք նաև, որ էլեկտրոնային գնումների համակարգում որպես մատակարար գրանցված ընկերության օգտատիրոջ էջն համակարգի կողմից ավտոմատ կերպով ապակտիվացվում է միայն այն դեպքում, երբ ARMEPS համակարգում իրականացվում է անընդմեջ առավելագույնը թվով 10 անհաջող մուտքի փորձ՝ ճիշտ մուտքանվան և սխալ գաղտնաբառի համակցությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ գրությամբ նշված հեռախոսահամարից 011 800 600 հեռախոսահամարին զանգ կատարվել է 04.03.2026թ. ժամը 17:52:52-ին, որի շրջանակում դիմողին պարզաբանվել է, որ օգտատիրոջ հաշվի վերականգնման և նույնականացման գործընթացը պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացնել գրություն:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Իմպեքսո» ՍՊԸ-ն նոր գաղտնաբառ ստանալու համար դիմել է Նախարարությանը 05/03/2026թ., իսկ գաղտնաբառի տրամադրումը Նախարարության կողմից իրականացվել է նույն օրը ժամը 12:30-ին (գրությունները կցվում են):

Կից տրամադրում ենք էլեկտրոնային գնումների համակարգերում առկա գրությամբ պահանջվող տեղեկատվությունը և հայտնում ենք, որ Նախարարությունը չի տիրապետում օգտատիրոջ գործողություններում ամրագրված IP հասցեների տեղակայման վայրի և օգտագործված սարքավորումների վերաբերյալ տեղեկատվությանը:»:

**4.8.** Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 13.04.2026 թվականի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 52Ա/1 հրամանի համաձայն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը «Իմպեքսո» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Որպես իրավական հիմք նշվել է՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի -րդ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս: Այլ անհրաժեշտ տեղեկատվության համաձայն՝ «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել էին անհամապատասխանություններ:

Մասնավորապես՝ 2026 թվականի փետրվարի 18-ին գնահատող հանձնաժողովն արձանագրել էր, որ «Իմպեքսո» ՍՊ ընկերության կողմից Հավելված 1.3-ով ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղմամբ հայտարարագիրը ներկայացված է 2025 թվականին, սակայն պետք է ներկայացված լիներ 2026 թվականի համար, ինչպես նաև հայտով ներկայացվող առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի փաստաթղթում նույնպես առկա են եղել անհամապատասխանություններ, որոնք մանրամասն նկարագրված են 11.03.2026 թվականի արձանագրութան մեջ: Գնահատող հանձնաժողովն 2026 թվականի մարտի 3-ին որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը: Այնուհետև՝ 02.04.2026 թվականի արձանագրությամբ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ նիստը կասեցնելուց հետո «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից համակարգի https://eauction.armeps.am/ միջոցով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները՝ դրանով թույլ տալով գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում:»:

**4.9.** Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 28.04.2026 թվականի Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2026 թվականի ապրիլի 13-ի թիվ 52-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանի համաձայն՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարը հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության 2026 թվականի ապրիլի 23-ի N 12/12-1/10950-2026 գրությունը և այն հանգամանքը, որ թիվ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 գնման ընթացակարգի շրջանակներում «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 01322649, հասցե՝ Երևան, Աջափնյակ, Մարգարյան փողոց, շենք 23, բնակարան 22) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2026 թվականի ապրիլի 13-ի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» N 52-Ա/1 հրամանը հաստատվելուց և ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղարկելուց հետո ՀՀ պետական բյուջեի թիվ 900008000466 հաշվին հայտի ապահովման համար 2026 թվականի փետրվարի 17-ին փոխանցված 8.205.000,00 ՀՀ դրամը գանձվել է ՀՀ պետական բյուջեի թիվ 900005000741 հաշվեհամարին, հրամայել է ուժը կորցրած ճանաչել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2026 թվականի ապրիլի 13-ի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» N 52-Ա/1 հրամանը:

2. «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01322649, հասցե՝ Երևան, Աջափնյակ, Մարգարյան փողոց, շենք 23, բնակարան 22) չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝

հայտի ապահովման գումարը գանձված լինելու հիմքով:

## 5. Դատարանի պատճառաբանությունները և իրավական վերլուծությունները

*Դատարանը նախ անդրադառնալով հայցվորի ներկայացուցչի կողմից 09.06.2026 թվականին ներկայացրած հայցի հիմքի և առարկայի փոփոխության միջնորդությանը, արձանագրում է հետևյալը.*

*Դատարանն արձանագրում է, որ հայցվորի ներկայացուցիչը 09.06.2026 թվականին ներկայացրել է հայցի հիմքի և առարկայի փոփոխության միջնորդություն, որով խնդրել է հայցի առարկան ձևակերպել հետևյալ կերպ.*

*«Անվավեր ճանաչել «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ին (նիստի արձանագրություն թիվ 3) ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, Ընթացակարգը չկայացած հայտարարելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով Պատվիրատուի ղեկավարին դիմելու, իսկ այդ պահանջներն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթաց նախաձեռնելու մասին որոշումները, և որպես այդ որոշումների անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52Ա/1 հրամանը, պարտավորեցնել Պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով վերսկսել հայտերի գնահատման նիստը և ՀՀ օրենսդրությամբ ու Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով գնահատել Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, շտկված փաստաթղթերով հայտը, ինչպես նաև՝ Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով տրամադրված հայտի ապահովման գումարը՝ 8.205.000 (ութ միլիոն երկու հարյուր հինգ հազար) ՀՀ դրամը, հետ փոխանցել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության անվամբ բացված թիվ 900008000466 գանձապետական հաշվին:»:*

Դատարանը, քննության առնելով հայցվորի ներկայացուցչի կողմից 09.06.2026 թվականին ներկայացված հայցի հիմքի և առարկայի փոփոխման (լրացման) վերաբերյալ միջնորդությունը, ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը, գալիս է այն եզրահանգման, որ միջնորդությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով, 25.05.2026 թվականի որոշմամբ արդեն իսկ մեկ անգամ թույլատրվել է հայցի հիմքի և առարկայի փոփոխություն, որից հետո Դատարանի 02.06.2026 թվականի որոշմամբ գործի քննության ժամկետը երկարաձգվել է և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 12.06.2026 թվականը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-

րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոփոխելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստում պատասխանողին տրամադրում է ոչ պակաս, քան մեկշաբաթյա ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Տվյալ դեպքում Դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 02.06.2026 թվականի որոշմամբ արդեն իսկ սպառվել է սույն քաղաքացիական գործի քննության ժամկետի երկարաձգման օրենսդրական հնարավորությունը, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների, Գնումների հատուկ վարույթի շրջանակներում այլևս իրավասություն չունի կրկնակի երկարաձգել գործի քննության ժամկետը:

Վերոնշյալից հետևում է, որ գնումների հետ կապված վեճերով գործերի քննության համար օրենսդիրը սահմանել է հատուկ, խիստ կանոններ, և Դատարանը կաշկանդված է գործի քննության վերջնաժամկետներով:

Իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Դատարանը՝ հաշվի առնելով գնումների հետ կապված վեճերով հարաբերությունների առանձնահատկությունը, փաստում է, որ դատարանի կողմից հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոփոխելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում պետք է պատասխանողին տրամադրել ոչ պակաս, քան մեկ շաբաթյա ժամկետ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու համար: Դատարանն արձանագրում է, որ հայցվոր ընկերությունը, բավականաչափ ժամանակահատված ունենալով, հայցի առարկան փոփոխելու/լրացնելու մասին միջնորդությունը ներկայացրել է այնպիսի ժամկետում, որով ամբողջությամբ անտեսել է այն հանգամանքը, որ միջնորդության բավարարման պարագայում Դատարանն առնվազն մեկ շաբաթյա ժամկետ պետք է տրամադրեր պատասխանողին, ինչը տվյալ իրավիճակում անհնարին կդարձներ գործի քննությունը օրենքով սահմանված խիստ ժամկետներում ավարտելը: Ընդ որում, Դատարանն ընդգծում է, որ հայցվորը զրկված չէր իր միջնորդությունը ներկայացնել ավելի վաղ, հետևաբար օրենսդրի կողմից հատուկ ընթացակարգով քննվող գործերի պարագայում գործին մասնակցող անձինք պարտավոր են դրսևորել բարեխիղճ վարքագիծ և բարեխղճորեն օգտվել իրենց դատավարական իրավունքներից օրենքով սահմանված կարգով: Մինչդեռ, ցանկացած իրավունքի իրացում պետք է բովանդակային լինի, իսկ իրավունքների ձևական, օրենքով չնախատեսված նպատակով իրացումը չի կարող համարվել իրավունքից բարեխիղճ օգտվել:

Համադրելով նշված իրավական դիրքորոշումները սույն գործի փաստերի հետ՝ Դատարանն արձանագրում է, որ հայցվորի կողմից վճարված հայտի ապահովման գումարի փաստացի գանձումը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կատարվել է դեռևս 23.04.2026 թվականին, իսկ դրա հիման վրա Կոմիտեի կողմից հայցվորին գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 52Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու որոշումը կայացվել է 28.04.2026 թվականին: Այսինքն, դեռևս 25.05.2026 թվականին Դատարան հայցի հիմքի և առարկայի փոփոխության միջնորդություն ներկայացնելու

պահին հայցվորն արդեն իսկ հստակ գիտեր էր կամ օբյեկտիվորեն կարող էր տիրապետել և իմանալ իր իրավունքների ենթադրյալ խախտումների կամ գումարի գանձման փաստի մասին: Չնայած դրան՝ հայցվորը նոր փոփոխություն կատարելու միջնորդությունը Դատարան է ներկայացրել միայն 09.06.2026 թվականին՝ դատական ակտի հրապարակման համար սահմանված 12.06.2026 թվականի վերջնաժամկետից ընդամենը երեք օր առաջ: Նման պայմաններում միջնորդության բավարարումը կհանգեցներ պատասխանողի՝ դիրքորոշում ներկայացնելու նվազագույն մեկշաբաթյա դատավարական իրավունքի կոպիտ խախտմանը, քանի որ Դատարանն օբյեկտիվորեն զրկված է գործի քննության ժամկետը կրկին երկարաձգելու հնարավորությունից հետևաբար հայցվորի ներկայացուցչի կողմից 09.06.2026 թվականին ներկայացված հայցի հիմքի և առարկայի փոփոխման միջնորդությունը ենթակա է մերժման:

*Դատարանը, ուսումնասիրելով գործի հանգամանքները և ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտնում է, որ հայցը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52Ա/1 հրամանն անվավեր ճանաչելու մասով ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցադիմումի կամ դիմումի հիման վրա:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը յուրաքանչյուր անձի իրավունք է վերապահել դիմելու դատարան Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար՝ պայմանով, որ այդ իրավունքի իրականացումը տեղի ունենա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Ըստ այդմ, քաղաքացիական գործի հարուցման համար նախադրյալ է սահմանվել դատարան ներկայացված հայցադիմումի կամ դիմումի առկայությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ հայցային վարույթը քաղաքացիական դատավարության հիմնական տեսակն է, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, հողային, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ իրավահարաբերություններից ծագող սուբյեկտիվ իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին վերաբերող վեճերի քննությանն ու լուծմանն ուղղված դատարանի գործողությունը, որը կարգավորվում է քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով: Իրավունքի պաշտպանության հայցային վարույթում առկա են՝ 1) կողմի՝ խախտված կամ վիճարկվող իրավունքից ծագող և օրենքով սահմանված որոշակի կարգով քննության ենթակա նյութաիրավական պահանջ, այսինքն՝ հայց, 2) սուբյեկտիվ իրավունքի մասին վեճ, 3) հակադիր շահերով օժտված երկու կողմեր, որոնք օժտված են նաև իրենց իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանելու որոշակի լիազորություններով (տե՛ս, թիվ ԵՄԴ/3384/02/15 քաղաքացիական գործով ՀՀ

վճռաբեկ դատարանի 03.08.2016 թվականի որոշումը):

Վերոնշյալի հիման վրա Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատավարական օրենսգրքով սահմանված կարգով հայցադիմում ներկայացնելով դատարան՝ շահագրգիռ անձը դատարանի լուծմանն է հանձնում իր և պատասխանողի միջև առկա վեճը, այլ կերպ ասած՝ շահագրգիռ անձը, հայց ներկայացնելով դատարան, վերջինից ակնկալում է իր սուբյեկտիվ իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին վերաբերող վեճերի քննությանն ու լուծմանն ուղղված քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով նախատեսված գործողությունների կատարում:

Այդուհանդերձ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով օրենսդիրը սահմանել է, որ դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ վեճն ըստ էության սպառվել է:

Վերոնշյալ վերլուծությունների հիման վրա, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իրավակարգավորմանը, Դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ օրենսդիրը, որոշակի նախադրյալների առկայության պարագայում դատարանի համար նախատեսելով քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով նախատեսված գործողությունների կատարման ընդհանուր պարտականություն՝ շահագրգիռ անձի սուբյեկտիվ իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին վերաբերող վեճը քննելու և լուծելու նպատակով, սահմանել է նաև հատուկ կարգավորումներ այն դեպքերի համար, երբ քաղաքացիական գործի հարուցումից հետո բացահայտվում է դատարանին հանձնված վեճի սպառված լինելու մասին, որպիսի պարագայում դատարանն արդեն կրում է քաղաքացիական գործի վարույթը դադարեցնելու պարտականություն՝ հաշվի առնելով իր քննությանը հանձնված վեճի բացակայության փաստը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում (...):

Նույն հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան (...):

Սույն գործով ձեռք բերված ապացույցների համաձայն, Դատարանն արձանագրում է, որ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 13.04.2026 թվականի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 52Ա/1 հրամանի համաձայն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը «Իմպեքսո» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Որպես իրավական հիմք նշվել է՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի -րդ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս: Այլ անհրաժեշտ տեղեկատվության համաձայն՝ «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել էին անհամապատասխանություններ:

Մասնավորապես՝ 2026 թվականի փետրվարի 18-ին գնահատող հանձնաժողովն արձանագրել էր, որ «Իմպեքսո» ՍՊ ընկերության կողմից Հավելված 1.3-ով ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղմամբ հայտարարագիրը ներկայացված է 2025 թվականին, սակայն պետք է ներկայացված լիներ 2026 թվականի համար, ինչպես նաև հայտով ներկայացվող առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի փաստաթղթում նույնպես առկա են եղել անհամապատասխանություններ, որոնք մանրամասն նկարագրված են 11.03.2026 թվականի արձանագրության մեջ: Գնահատող հանձնաժողովն 2026 թվականի մարտի 3-ին որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը: Այնուհետև՝ 02.04.2026 թվականի արձանագրությամբ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ նիստը կասեցնելուց հետո «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից համակարգի https://eauction.armeps.am/ միջոցով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները՝ դրանով թույլ տալով գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում:»:

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 28.04.2026 թվականի Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2026 թվականի ապրիլի 13-ի թիվ 52-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանի համաձայն՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարը հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության 2026 թվականի ապրիլի 23-ի N 12/12-1/10950-2026 գրությունը և այն հանգամանքը, որ թիվ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 գնման ընթացակարգի շրջանակներում «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 01322649, հասցե՝ Երևան, Աջափնյակ, Մարգարյան փողոց, շենք 23, բնակարան 22) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2026 թվականի ապրիլի 13-ի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» N 52-Ա/1 հրամանը հաստատվելուց և ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղարկելուց հետո ՀՀ պետական բյուջեի թիվ 900008000466 հաշվին հայտի ապահովման համար 2026 թվականի փետրվարի 17-ին փոխանցված 8.205.000,00 ՀՀ դրամը գանձվել է ՀՀ պետական բյուջեի թիվ 900005000741 հաշվեհամարին, հրամայել է ուժը կորցրած ճանաչել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2026 թվականի ապրիլի 13-ի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» N 52-Ա/1 հրամանը:

2. «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01322649, հասցե՝ Երևան, Աջափնյակ, Մարգարյան փողոց, շենք 23, բնակարան 22) չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հայտի ապահովման գումարը գանձված լինելու հիմքով:

Դատարանը վերոշարադրյալ իրավական նորմերի, դրանց իրավադրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ արտահայտած Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների և սույն գործով փաստերի համադրմամբ կատարված վերլուծության արդյունքում արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործի հայցապահանջների մի մասը վերաբերում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52Ա/1 հրամանն անվավեր ճանաչելուն:

Սույն հայցապահանջի մասով իրավական վեճի քննության անհրաժեշտությունը ենթակա է գնահատման դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար սկզբունքի լույսի ներքո, ինչպիսին է իրական վեճի առկայությունը, որը կողմերի միջև պետք է գոյություն ունենա դատական քննության ողջ ընթացքում և դատարանի կողմից վերջնական դատական ակտ կայացնելու պահին: Քաղաքացիական դատավարության նպատակն է խախտված կամ վիճարկվող իրավունքների վերականգնումը, ինչը ենթադրում է, որ դատարանի որոշումը պետք է ունենա գործնական նշանակություն և հանգեցնի անձի իրավական դրության փաստացի բարելավմանը, այլ ոչ թե կրի սոսկ տեսական կամ վերացական բնույթ:

Գործի նյութերի համակողմանի ուսումնասիրությունից երևում է, որ հայցադիմումը դատարան ներկայացնելուց հետո պատասխանող կողմը՝ ի դեմս Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի, 28.04.2026 թվականին արձակել է նոր հրաման, որով ուժը կորցրած է ճանաչել վիճարկվող 13.04.2026 թվականի թիվ 52-Ա/1 հրամանը և ուղղակիորեն սահմանել է «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառելու իրավական հետևանքը: Պատասխանողի կողմից նման որոշման կայացման համար հիմք է հանդիսացել այն փաստական հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարության 24.04.2026 թվականի գրության համաձայն՝ հայցվորի կողմից նախապես վճարված 8.205.000,00 ՀՀ դրամ հայտի ապահովման գումարը հաջողությամբ գանձվել է պետական բյուջե, ինչն օրենքի ուժով բացառում է մասնակցի ներառումը հիշյալ բացասական իրավական հետևանքներ առաջացնող ցուցակում:

Տվյալ դեպքում Դատարանն արձանագրում է, որ վիճարկվող թիվ 52Ա/1 հրամանն անվավեր ճանաչելու հայցապահանջի մասով կողմերի միջև սուբյեկտիվ իրավունքի կամ օրինական շահի վերաբերյալ դատական կարգով լուծման ենթակա վեճն այլևս գոյություն չունի: Քանի որ պատասխանողն ինքնուրույն վերացրել է իր իսկ կայացրած իրավական ակտը, և հայցվոր կազմակերպությունն այլևս ներառված չէ ու չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում հիշյալ հիմքով, ապա դատական քննության շարունակումն այդ մասով կորցրել է իր իրավական և գործնական նպատակը: Վիճարկվող ակտի իրավական ուժի դադարեցմամբ հայցվորի իրավունքների ենթադրյալ խախտումը կամ դրանց սպառնացող վտանգը լիովին չեզոքացվել է, ինչը նշանակում է, որ սույն վեճն ըստ էության սպառվել է դատավարության ընթացքում՝ նախքան գործով եզրափակիչ դատական ակտի կայացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմպերատիվ պահանջի համաձայն՝ դատարանը դատավարության ցանկացած փուլում պարտավոր է կարճել գործի վարույթը, եթե վեճն ըստ էության սպառվել է: Քանի որ վիճարկվող հրամանի իրավական հետևանքները վերացված են պատասխանողի կողմից, և դատարանն այլևս չի կարող անվավեր ճանաչել մի ակտ, որն արդեն իսկ ուժը կորցրած է ճանաչվել և չի հանդիսանում գործող իրավական ակտ, Դատարանը հանգում է այն եզրակացության, որ հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ թիվ 52Ա/1 հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասով, ենթակա է կարճման՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով:

*Դատարանն անդրադառնալով հայցվորի կողմից ներկայացված մյուս պահանջներին արձանագրում է հետևյալը.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 234.5-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով

սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:

Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները:

Գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) պատվիրատու՝

ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետության կամ համայնքների հիմնարկներ,

(...)

3) գնում՝ պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը.

(...)

5) մասնակից՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով

գնումների գործընթացին մասնակցող անձ.

6) ընտրված մասնակից՝ մասնակից (մասնակիցներ), որին (որոնց) պատվիրատուն առաջարկում է կնքել պայմանագիր.

7) հրավեր՝ պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններ.

8) հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ.

(...)

13) լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին.

(...)

17) գնման առարկայի բնութագիր՝ գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններ.

(...)

23) գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը. (...)։

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից։ Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում։

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝

1) էլեկտրոնային աճուրդը.

2) մրցույթը.

3) գնանշման հարցումը.

4) մեկ անձից գնումը։

Նույն Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով։ Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են։

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 2-րդ կետի համաձայն՝ հրավերում և պայմանագրում հիմնական

պայմանների ներառման, ինչպես նաև Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն:

Կարգի 4-րդ կետի գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Վճռաբեկ դատարանը, 04.05.2025 թվականի թիվ ԵԴ/54386/02/21 քաղաքացիական գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. 
*(...) Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գնումը հանրային կարիքների համար անհրաժեշտ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը ձեռք բերելու համար կատարվող որոշակի գործողությունների համախումբ է, որոնց արդյունքում կնքվում է գնման պայմանագիրը, և բավարարվում է պատվիրատուի կարիքը:*

*Գնման գործընթացն իրականացվում է միմյանց տրամաբանորեն հաջորդող որոշակի փուլերով:*

*Գնման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել հաջորդաբար տեղի ունեցող առնվազն երկու փուլերի՝*

*1) կոնտրագենտի ընտրության (նախապայմանագրային) փուլ, որը հետապնդում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախանշված սկզբունքների պահպանմամբ լավագույն (տնտեսող, արդյունավետ և օգտավետ) առաջարկի ընտրության և նրա հետ պայմանագրի կնքման նպատակ.*

*2) ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագրի կատարման (պայմանագրային) փուլ, որի նպատակը նախորդ փուլում ընտրված մասնակցից նրա կողմից առաջարկված և հավանության արժանացած առաջարկի պայմաններով ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ձեռքբերման ապահովումն ու պատվիրատուի կարիքի բավարարումն է:*

*Գնման գործընթացի փուլերից յուրաքանչյուրի ընթացքում գնման գործընթացը նախաձեռնող պատվիրատուի և գնման գործընթացի մասնակիցների միջև ծագում են տարաբնույթ պարտավորական հարաբերություններ, որոնց իրավական կարգավորման հիմքում օրենսդիրը դրել է գնման գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման վերջնանպատակն ու գնման գործընթացը միասնական կանոններով իրականացնելու, այն մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպելու, մասնակիցների շրջանակի ընդլայնման, նրանց միջև մրցակցության խրախուսման, ցանկացած անձի համար գնման գործընթացին մասնակցելու հնարավորության ապահովման սկզբունքները: Ընդ որում, նախապայմանագրային փուլում որպես գնման գործընթացի սուբյեկտների քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների ծագման հիմք հանդես են գալիս «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված*

*միակողմանի գործողությունները (գնումների հայտարարության և հրավերի հրապարակումը, հայտի ներկայացումը, ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում կայացնելը և այլն), իսկ պայմանագրային փուլում՝ պատվիրատուի ու սահմանված կարգով ընտրված մասնակցի միջև կնքված պայմանագիրը: (...)*

*Վերը շարադրված իրավական նորմերի և Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հրապարակված հրավերի հիման վրա գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելով՝ անձը ոչ միայն պարզապես ձեռք է բերում գնման գործընթացին մասնակցող անձի կարգավիճակ, այլ նաև, որպես հետևանք՝ գնումների գործընթացի նախապայմանագրային փուլում առնվազն ստանձնում է՝*

*1) հայտն օրենքով և հրավերով սահմանված կարգով ներկայացնելու պարտավորություն՝ ներառյալ հայտին հրավերով պահանջվող փաստաթղթերը (այդ թվում՝ հայտի ապահովումը հավաստող) կցելու, գնման գործընթացում գնահատող հանձնաժողովին պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու պարտականություն,*

*2) հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին արժանահավատ հավաստում ներկայացնելու պարտականություն,*

*3) ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում որակավորման ապահովում ներկայացնելու, պայմանագրի ապահովում ներկայացնելու, պայմանագիրը կնքելու պարտականություն: (...)* »:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

Սույն գործով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն Դատարանն արձանագրում է, որ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գնահատող հանձնաժողովի 04.02.2026 թվականի որոշմամբ հաստատված հրավերի և հայտարարության համաձայն՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով էլեկտրոնային աճուրդ Armeps (eauction.armeps.am) համակարգի միջոցով հայտարարվել է թիվ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով աճուրդ:

Էլեկտրոնային աճուրդի մասին հայտարարության համաձայն՝ ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 12-րդ օրվա ժամը12:00-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 12-րդ օրվա ժամը12:00-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հրավերի 1-ին մասի 4.3. կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակ¬ցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերովսահմանված կարգով և ժամկետում որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության կամ սույն հրավերվ սահմանված՝ վարկունակության վարկանիշ ունենալու մասին

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան); Ընդ որում՝

- 1.2 հավելվածը ներկայացնում է ՀՀ ռեզեդենտ չհանդիսացող մասնակիցը.

- 1.3 հավելվածը ներկայացնում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր  կամ ֆիզիկական անձ է.

- դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը  չի լրացվում.Եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հավելվածը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

2) գնային առաջարկ, որը ներկայացվում է համակարգի միջոցով: Գնային առաջարկի ներկայացման կարգը և պայմանները սահմանված են սույն հրավերի 1-ին մասի 5-րդ և 2-րդ մասի 2-րդ բաժնով.

3) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի  ապրանքային նշանը,  ֆիրմային անվանումը, մոդել, արտադրողի անվանումը  (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով: Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր  ապրանքային նշան,  ֆիրմային անվանում, մոդել ունեցող ապրանքներ: եթե չի կիրառվում սույն մասի 1.1 կետի վերջին նախադասությամբ սահմանված պայմանը 2

4) հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացվելու դեպքում մասնակիցը հայտում ներառում է դրա վճարումը հավաստող փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը3

5) գործակալության պայմանագրի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

6) համատեղ գործունեության պայմանագրի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից.

Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) սույն ընթացակարգին մասնակցելու դեպքում՝

համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին: Այն դեպքում, երբ համատեղ գործունեության պայմանագրով նախատեսվում է, որ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, ապա պայմանագիր կնքվելու դեպքում դրա հիման վրա վճարումները կատարվում են հայտը

ներկայացրած մասնակցին:

Հայտում ներառված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին և հայտեր ներկայացրած մասնակիցներին հասանելի է դառնում բացառապես աճուրդի արդյունքներն ամփոփելուց հետո՝ ավտոմատ եղանակով:

Հրավերի 8.1. կետի համաձայն՝ Սույն հրավերով սահմանված՝ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին և գնահատող հանձնաժողովի բոլոր անդամներին միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը՝ առանց ավելացված արժեքի հարկի գումարի, ըստ չափաբաժինների էլեկտրոնային աճուրդը սկսելու օրը և ժամը, ինչպես նաև օգտագործվող էլեկտրոնային սար¬քա¬վո¬րումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալները: Եթե սույն ընթացակարգը բողոքարկվել է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը և առկա չէ ընթացակարգի կասեցումը հանելու մասին դատարանի որոշում, ապա սույն կետով նախատեսված տեղեկատվությունը համակարգը մասնակիցներին ուղարկում է բողոքի վերաբերյալ կայացված որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Ընդ որում անկախ ընթացակարգը կասեցված լինելու հանգամանքից, մասնակիցներն ունեն մինչև սույն հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը հայտեր ներկայացնելու, ներկայացված հայտերըւ փոխելու կամ հետ վերցնելու հնարավորություն:

Հրավերի 8.2. կետի համաձայն՝ Էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2026.02.18. 12:00-ին: Եթե աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո:

«ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2026 թվականին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2. կետի համաձայն՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով ի թիվս այլոց գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Իմպեքսոn ՍՊ ընկերությունը:

Արձանագրության 2.3 կետի համաձայն՝ Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

«Իմպեքսոn» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.3-ով ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղմամբ հայտարարագիրը ներկայացված է 2025 թվականին, սակայն պետք է ներկայացված լինի 2026 թվականի համար, ինչպես նաև հայտով ներկայացվող առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի փաստաթղթում.

• «Ջերբաձկան կենսունակությունը և վարքագիծը գնահատող համակարգ» չափաբաժնի «1.7 Ծերեփուկների դիտարկման խցիկ՝ տեսախցիկով և ներդրված լուսային բլոկով» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ «Դիտարկման խցիկում տեսախցիկի հեռավորությունը պետք է լինի օբյեկտից ոչ պակաս, քան 30 սմ՝ առանց պարալաքս խնդիրների կամ օկլյուզիաների 96 տեղանոց պլանշետներում», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում

ներկայացվել է՝ «Դիտարկման խցիկում տեսախցիկի հեռավորությունը պետք է լինի օբյեկտից 30 սմ-ից պակաս օբյեկտից, առանց պարալաքս խնդիրների կամ օկլյուզիաների 96 տեղանոց պլանշետներում», ինչպես նաև «1.10 Մանրադիտակ՝ տեսախցիկով» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ «Միջակնային ճշգրտում Siedentopf-ի չփոխհատուցվող մեթոդով՝ 55-75 մմ», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկակակն բնութագրում ներկայացվել է՝ «Միջակնային ճշգրտում\gamel առանց փոխհատուցման Zidentop-fa,՝ 55-75 մմ»:

• «Ձեռրաձկան պահպանման համակարգ՝ լրակազմով» չափաբաժնի «1.3 Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ ֆիլտրեր, պահեստային մասեր, աքսեսուարներ» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ «Արտեմիայի ցիստեր՝ 1 կգ», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ «Ծովախեցգետնի կիստաներ՝ 1 հատ» ձևակերպումը:

• «Արդյունաբերական լվացքի մեքենա» չափաբաժնի «1.3 Կոնստրուկցիա/նյութեր» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է՝ Արտաքինը՝ չժանգոտվող պողպատ՝ AISI 304 Scotch Brite finish Ra<40µin (Rad.2µm) տեսակի կամ համարժեք: Լվացքի խցիկը և դռները AISI 316L BA Ra<30 µin (Ra<0.8 µm) տեսակի պողպատից են կամ համարժեք, իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ Արտաքինը՝ չժանգոտվող պողպատ՝ AISI 304 Scotch Brite finish Ra «40µin (Ra«1.2µm): Լվացքի խցիկը և դռները AISI 316L BA Ra «30µin (Ra«0.8µm) տեսակի պողպատից են, ինչպես նաև «1.14 Շրջակա միջավայր» ենթաբաժնում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է «Համարժեք աղմուկի ճնշման մակարդակ՝ < 70 դԲ (A)», իսկ Ձեր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում ներկայացվել է՝ «Համարժեք աղմուկի ճնշման մակարդակ՝ « 70 դԲ (A)» ձևակերպումը (<-ի փոխարեն կիրառվել է « նշանը):

1. Արձանագրության 3.2. կետի համաձայն՝ որոշվել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

«Իմպեքստ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով 2026թ. մարտի 11-ին Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգը հայտարարել կասեցված մինչև ուսումնասիրության ավարտը:

«ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.04.2026 թվականին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ հանձնաժողովը արձանագրել է որ «Իմպեքստ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Փաստաթղթերում 2026 թվականի փետրվարի 18-ին արձանագրվել էին անհամապատասխանություններ, որով պայմանավորված և Կարգի 41-րդ կետի կիրառմամբ 2026 թվականի մարտի 3-ին Հանձնաժողովը որոշել էր նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել «ԻՄՊԵՔՍՏ» ՍՊ ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունները:

Նիստը կասեցնելուց հետո «ԻՄՊԵՔՍՏ» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում համակարգի https://eauction.armeps.am/ միջոցով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Հանձնաժողովը որոշել է՝

«ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության հայտը գնահատել որպես անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետով սահմանված պահանջները։

«Gmail» կայքի արտատպվածքի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը «no-reply@eauction.armeps.am» էլ. հասցե միջոցով «impexso.company@gmail.com» էլ. հասցեին 03.03.2026 թվականին ժամը 17:52-ին ուղարկել է «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերտառությամբ գրությունը, որում նշվել է հայտում արձանագրված թերությունները։

«Gmail» կայքի արտատպվածքի համաձայն՝ «Իմպեքսո» ՍՊ ընկերությունը «impexso.company@gmail.com» էլ. հասցե միջոցով «a.arakelyan@promotion.am» էլ. հասցեին 04.03.2026 թվականին ուղարկել է «Լիազորագիր.pdf», «Իմպեքսո_signed.pdf», «Հավելված 1,3_signed.pdf», «հավելված 1.1_signed.pdf» վերտառությամբ էլեկտրոնային ֆայլերը։

ՀՀ Ֆինանսների նախարարության նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանին ուղղված թիվ 03/26-1/5742-2026 գրությամբ մասնավորապես հայտնել է.

«Էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Իմպեքսո» ՍՊԸ-ին ավտոմատ ծանուցման եղանակով 03/03/2026թ. ժամը 17:52-ին ուղարկվել է մասնակցության հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման պահանջ: Համակարգում շտկման ժամանակահատված է սահմանվել՝ 03/03/2026թ. ժամը 17:52-ից մինչև 04/03/2026թ. ժամը 23:59-ը:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ համակարգում «Իմպեքսո» ՍՊԸ-ի օգտահաշիվը՝ բազմակի անհաջող մուտքի փորձերի արդյունքում, 03/03/2026թ. ժամը 11:30-ից մինչ 05/03/2026թ. ժամը 12:30-ը արգելափակված է եղել, ինչի արդյունքում մասնակիցը չի ունեցել համակարգի միջոցով շտկված փաստաթղթերը ներկայացնելու հնարավորություն:

Մասնակիցը 05/03/2026թ. դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը նոր գաղտնաբառ տրամադրելու համար, իսկ 06/03/2026թ. գրությամբ (կցվում է) հայտնել է, որ փաստաթղթերի շտկման համար սահմանված ժամկետում, հաշվի առնելով, որ օգտահաշիվը եղել է արգելափակված, էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերն ուղարկել է գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին:

Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից աշխատանքային կարգով տրամադրված՝ շտկված փաստաթղթերը (կցվում են) էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված են շտկման համար սահմանված ժամկետում, ինչպես նաև, որ դրանք քարտուղարին ուղարկվել են մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը, գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը կարող է հիմք ընդունել քարտուղարի էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը և հրավերով սահմանված կարգով համակարգում շարունակել հայտի գնահատումը, համոզվելով, որ էլեկտրոնային ստորագրությունները վավեր են, իսկ փաստաթղթերը ստորագրված են շտկման համար նախատեսված ժամանակահատվածում:»:

ՀՀ Ֆինանսների նախարարության նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանը փաստաբան Դ. Հովսեփյանին ուղղված թիվ 03/26-1/12561-2026 գրությամբ

մասնավորապես հայտնել է.

«Ի պատասխան Ձեր սույն թվականի մայիսի 06-ի թիվ 1964649 և 1966448 գրությունների՝ հայտնում ենք, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգին «Իմպեքսռ» ՍՊԸ-ի կողմից մասնակցության հայտը ներկայացվել է 16/02/2026թ. ժամը 20:10:41-ին:

Հայտնում ենք նաև, որ էլեկտրոնային գնումների համակարգում որպես մատակարար գրանցված ընկերության օգտատիրոջ էջն համակարգի կողմից ավտոմատ կերպով ապակտիվացվում է միայն այն դեպքում, երբ ARMEPS համակարգում իրականացվում է անընդմեջ առավելագույնը թվով 10 անհաջող մուտքի փորձ՝ ճիշտ մուտքանվան և սխալ գաղտնաբառի համակցությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ գրությամբ նշված հեռախոսահամարից 011 800 600 հեռախոսահամարին զանգ կատարվել է 04.03.2026թ. ժամը 17:52:52-ին, որի շրջանակում դիմողին պարզաբանվել է, որ օգտատիրոջ հաշվի վերականգնման և նույնականացման գործընթացը պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացնել գրություն:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Իմպեքսռ» ՍՊԸ-ն նոր գաղտնաբառ ստանալու համար դիմել է Նախարարությանը 05/03/2026թ., իսկ գաղտնաբառի տրամադրումը Նախարարության կողմից իրականացվել է նույն օրը ժամը 12:30-ին (գրությունները կցվում են):

Կից տրամադրում ենք էլեկտրոնային գնումների համակարգերում առկա գրությամբ պահանջվող տեղեկատվությունը և հայտնում ենք, որ Նախարարությունը չի տիրապետում օգտատիրոջ գործողություններում ամրագրված IP հասցեների տեղակայման վայրի և օգտագործված սարքավորումների վերաբերյալ տեղեկատվությանը:»:

*Դատարանը, ուսումնասիրելով սույն քաղաքացիական գործի նյութերն ու կողմերի դիրքորոշումները, գործի լրիվ, բազմակողմանի և ամբողջական քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է համարում անդրադառնալ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հետևյալ հարցադրումներին.*

1. **Հայտերի գնահատման ժամկետների իրավաչափության հարցը.** Արդյո՞ք Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման նիստի երկարաձգումը և վերջնական որոշման կայացումը սահմանված 15-աշխատանքային օրվա լրանալուց հետո հանդիսանում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի և Ընթացակարգի հրավերի պահանջների խախտում, և արդյո՞ք մասնակցի ներկայացրած պարզաբանումների հիման վրա գնման գործընթացի կասեցումը/սպասումը հանդիսանում է իրավաչափ հիմք՝ գնահատման ընդհանուր ժամկետի ընթացքը երկարաձգելու համար:

2. **Արձանագրված անհամապատասխանությունների շտկման եղանակի և օբյեկտիվ անհնարինության հարցը.** Արդյո՞ք էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) մասնակցի օգտահաշվի արգելափակված լինելու պայմաններում, շտկված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված և սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկելը կարող է համարվել պարտավորության պատշաճ կատարում, և արդյո՞ք Պատվիրատուն, հաշվի առնելով լիազոր մարմնի դիրքորոշումը, իրավասու կամ պարտավոր էր հիմք ընդունել

էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը:

*1. Դատարանն անդրադառնալով* ***հայտերի գնահատման ժամկետների իրավաչափության հարցադրմանը, մասնավորապես*** *արդյո՞ք Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման նիստի երկարաձգումը և վերջնական որոշման կայացումը սահմանված 15-աշխատանքային օրվա լրանալուց հետո հանդիսանում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի և Ընթացակարգի իրավերի պահանջների խախտում, և արդյո՞ք մասնակցի ներկայացրած պարզաբանումների հիման վրա գնման գործընթացի կասեցումը/սպասումը հանդիսանում է իրավաչափ հիմք՝ գնահատման ընդհանուր ժամկետի ընթացքը երկարաձգելու համարարձանագրում է հետևյալը.*

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի համաձայն՝ Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է

տեղեկագրում, բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 20-րդ կետերի հիման վրա կատարվող գնումների:

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված քսան աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավերի 8.1. կետի համաձայն՝ Սույն հրավերով սահմանված՝ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին և գնահատող հանձնաժողովի բոլոր անդամներին միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը՝ առանց ավելացված արժեքի հարկի գումարի, ըստ չափաբաժինների էլեկտրոնային աճուրդը սկսելու օրը և ժամը, ինչպես նաև օգտագործվող էլեկտրոնային սար¬քա¬վո¬րումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալները: Եթե սույն ընթացակարգը բողոքարկվել է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը և առկա չէ ընթացակարգի կասեցումը հանելու մասին դատարանի որոշում, ապա սույն կետով նախատեսված տեղեկատվությունը համակարգը մասնակիցներին ուղարկում է բողոքի վերաբերյալ կայացված որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Ընդ որում անկախ ընթացակարգը կասեցված լինելու հանգամանքից, մասնակիցներն ունեն մինչև սույն հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը հայտեր ներկայացնելու, ներկայացված հայտերըւ փոխելու կամ հետ վերցնելու հնարավորություն:

Հրավերի 8.2. կետի համաձայն՝ Էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2026.02.18. 12:00-ին: Եթե աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո:

Դատարանը վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում արձանագրում է, որ գնումների օրենսդրությամբ սահմանված հայտերի գնահատման տասնհինգ աշխատանքային օրվա ժամկետն ունի իմպերատիվ բնույթ, որի նպատակն է ապահովել գնումների գործընթացի արդյունավետ, օգտավետ և կանխատեսելի իրականացումը: Միևնույն ժամանակ, օրենսդիրը հանձնաժողովի համար նախատեսել է պարտադիր ընթացակարգային գործիքակազմ՝ հայտերում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում նիստը մեկ աշխատանքային օրվա ժամկետով կասեցնելու և մասնակցին շտկման հնարավորություն ընձեռելու վերաբերյալ:

Համադրելով Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի և 41-րդ կետի իրավակարգավորումները՝ Դատարանը հանգում է այն իրավական եզրահանգման, որ գնահատման նիստի կասեցմամբ օրենքի ուժով կասեցվում է նաև հայտերի գնահատման համար սահմանված ընդհանուր տասնհինգ աշխատանքային օրվա ժամկետի հոսքը: Նման մեկնաբանությունը բխում է այն տրամաբանությունից, որ կասեցման ժամանակահատվածում գնահատող հանձնաժողովն օբյեկտիվորեն զրկված է հայտերի հետագա գնահատման

ընթացակարգային գործողություններ իրականացնելու իրավական հնարավորությունից, քանի որ սպասում է մասնակցի կողմից անհամապատասխանությունների փաստացի շտկմանը: Հետևաբար, կասեցված նիստի պայմաններում ժամկետի հոսքի շարունակվելու վերաբերյալ հայցվորի պնդումը զրկված է իրավական հիմքից, և կասեցման ժամանակահատվածը չի կարող ներառվել հայտերի գնահատման համար նախատեսված ընդհանուր ժամկետի հաշվարկի մեջ:

Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Դատարանն արձանագրում է, որ «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 17.02.2026 թվականը, որից հաշվարկվող տասնհինգ աշխատանքային օրվա իմպերատիվ ժամկետի (հաշվի առնելով նաև Գնահատող հանձնաժողովի 03.03.2026 թվականի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու հանգամանքը) ընթացքն ավարտվել է 10.03.2026 թվականին: Գործի նյութերով հաստատված է համարվում այն փաստը, որ Գնահատող հանձնաժողովը նշված ժամկետի ընթացքում չի ավարտել հայտերի գնահատման փուլը և չի կայացրել համապատասխան եզրափակիչ որոշում, այլ 11.03.2026 թվականին կազմված թիվ 2 արձանագրությամբ վերսկսել է հայտերի գնահատման նիստը և այն փաստացի ավարտել է միայն 02.04.2026 թվականին՝ կայացնելով հայցվորի հայտը մերժելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին վիճարկվող որոշումները:

Գնահատող հանձնաժողովն իր նման վարքագիծը և ժամկետների նմանօրինակ երկարաձգումը պատճառաբանել է այն հանգամանքով, որ հայցվորի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված գրության և տեխնիկական խնդիրների իսկությունը պարզելու, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված պաշտոնական դիրքորոշման կապակցությամբ լրացուցիչ իրավական հիմնավորումներ ստանալու նպատակով ստիպված է եղել երկարաձգել (կասեցնել) գնման գործընթացը՝ մինչև ուսումնասիրությունների ավարտը:

Դատարանը, գնահատելով պատասխանողի նշված պատճառաբանությունները, գտնում է, որ դրանք հիմնված են օրենքի սխալ մեկնաբանության վրա և չեն կարող հիմք հանդիսանալ Գնահատող հանձնաժողովի կողմից իրավունքի ուժով սահմանված բացառիկ ժամկետների կամայական ընդլայնման համար:

Գնումների ոլորտը կարգավորող իրավական ակտերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը հստակ տարանջատել է գնումների գործընթացում ներգրավված սուբյեկտների իրավասությունների շրջանակը՝ չվերապահելով գնահատող հանձնաժողովներին հայեցողական այնպիսի լիազորություններ, որոնցով վերջիններս կարող են ինքնուրույն, օրենքով չնախատեսված հիմքերով ու պատճառաբանություններով սահմանել նոր ժամկետներ կամ անորոշ ժամանակով կասեցնել հայտերի գնահատման փուլը: Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված 15-աշխատանքային օրյա ժամկետը հանդիսանում է հանրային իրավունքի տիրույթում գործող իմպերատիվ սահմանափակում, որի ընթացքում հանձնաժողովը պարտավոր է կատարել իրեն վերապահված գործառույթները և կայացնել վերջնական որոշում: Օրենսդրությամբ հանձնաժողովին չի տրված իրավունք սեփական նախաձեռնությամբ կամ լիազոր մարմնի հետ գրագրություն վարելու հիմքով ստեղծել օրենքով չնախատեսված ընթացակարգային նոր փուլեր և դրանով իսկ խաթարել գնումների գործընթացի կանխատեսելիության ու ժամկետների պահպանման հիմնարար սկզբունքները:

Դատարանն արձանագրում է, որ նույնիսկ եթե Գնահատող հանձնաժողովի գործողությունները միտված են եղել գործի փաստական

հանգամանքների բազմակողմանի պարզմանը, միևնույն է, իրավասության բացակայության պայմաններում ժամկետի ինքնուրույն երկարաձգումը չի կարող որակվել իրավաչափ: Հանրային իրավասությամբ օժտված մարմինն իրավունք ունի գործելու բացառապես այնպիսի եղանակներով և սահմաններում, որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքով կամ ենթաօրենսդրական ակտերով: Քանի որ Կարգով նախատեսված չէ որևէ դրույթ, որը թույլ կտար հանձնաժողովին լիազոր մարմնի հետ լրացուցիչ հարցումներ իրականացնելու հիմքով ինքնուրույն սահմանել նոր ժամկետներ և շրջանցել 15-աշխատանքային օրվա վերջնաժամկետը, ապա Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման փուլի ձգձգումը և որոշումների կայացումը միայն 02.04.2026 թվականին հանդիսանում է ոչ իրավաչափ:

Այսպիսով, համադրելով սույն գործի փաստերը, Դատարանը հանգում է այն եզրակացության, որ «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը 10.03.2026 թվականից հետո այլևս իրավասու չէր իրականացնել հայտերի գնահատում և դրա վերաբերյալ կայացնել որոշումներ: Հետևաբար, Գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված իմպերատիվ ժամկետների խախտմամբ 2026 թվականի ապրիլի 2-ին ընդունված բոլոր որոշումները (այդ թվում՝ հայցվորի հայտն անբավարար գնահատելու և մերժելու, ինչպես նաև ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով) կայացվել են ընթացակարգային նորմերի խախտմամբ, ինչն ինքնին հիմք է հանդիսանում նշված որոշումներն անվավեր ճանաչելու համար:

Թեև վերը նշվածը արդեն իսկ բավարար էր գնահատող հանձնաժողովի կողմից հայցվորի հայտը մերժելու մասին որոշումն ոչ իրավաչափ ճանաչելու համար, այնուամենայնիվ, գործի լրիվ, օբյեկտիվ և ամողջական քննությունն ապահովելու համար Դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև մյուս հարցադրումներին:

*Դատարանն անդրադառնալով արձանագրված անհամապատասխանությունների շտկման եղանակի և օբյեկտիվ անհնարինության հարցադրմանը, մասնավորապես արդյո՞ք էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) մասնակցի օգտահաշվի արգելափակված լինելու պայմաններում, շտկված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված և սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկելը կարող է համարվել պարտավորության պատշաճ կատարում, և արդյո՞ք Պատվիրատուն, հաշվի առնելով լիազոր մարմնի դիրքորոշումը, իրավասու կամ պարտավոր էր հիմք ընդունել էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը, արձանագրում է հետևյալը.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պատասխանատու է պարտավորությունը չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու համար՝ մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: (...):

Սույն գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար հայցվորին տրամադրվել է մեկ աշխատանքային օր ժամկետ՝ մինչև 04.03.2026 թվականի ժամը 23:59-ը: Գործում առկա ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի թիվ 03/26-1/12561-2026 գրությամբ և դրան կից էլեկտրոնային տվյալների (IP հասցեների լոգերի) հետազոտությամբ հաստատված է համարվում, որ 03.03.2026 թվականի ժամը 11:30-ից մինչև 05.03.2026 թվականի ժամը 12:30-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի համակարգում (https://eauction.armeps.am) հայցվորի օգտահաշիվն ավտոմատ կերպով ապակտիվացված (արգելափակված) է եղել: Սույն արգելափակումն առաջացել է հայցվորին անհայտ 4 տարբեր IP հասցեներից կատարված ընդհանուր թվով 354 անհաջող մուտքի փորձերի (ճիշտ մուտքանվան և սխալ գաղտնաբառի համակցության) արդյունքում, ինչը վկայում է այն մասին, որ հայցվորը զրկված է եղել համակարգ մուտք գործելու և տեխնիկական եղանակով շտկումը ներկայացնելու օբյեկտիվ հնարավորությունից:

Դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում հայցվորի համար ստեղծվել է անհաղթահարելի ուժի՝ արտակարգ և անկանխելի տեխնիկական խոչընդոտի իրավիճակ, որի պարագայում վերջինս դրսևորել է բարեխիղճ մասնակցին բնորոշ վարքագիծ և ձեռնարկել է իրենից կախված բոլոր հնարավոր միջոցները պարտավորությունը կատարելու համար: Մասնավորապես, հայցվորի ներկայացուցիչը 04.03.2026 թվականին՝ սահմանված ժամկետի ընթացքում, տեղեկանալով արգելափակման մասին, անմիջապես կապ է հաստատել տեխնիկական սպասարկող մարմնի հետ, իսկ ժամը 18:16-ից մինչև 19:26-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատել է շտկված փաստաթղթերի փաթեթը (Հավելված 1.1 և Հավելված 1.3) և նույն օրը՝ ժամը 19:57-ին, ուղարկել է Գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

Անդրադառնալով պատասխանողի այն պնդմանը, թե էլեկտրոնային փոստի միջոցով շտկված փաստաթղթերի ընդունումը կհանդիսանար գնումների ընթացակարգի իմպերատիվ պահանջների խախտում, քանի որ Հրավերի 8.11-րդ կետն ուղղակիորեն պահանջում է շտկումը կատարել համակարգի միջոցով, Դատարանն արձանագրում է, որ պատասխանողը, վկայակոչելով նշված ֆորմալ պահանջը, այդպես էլ չի հստակեցրել և չի մատնանշել, թե տվյալ օբյեկտիվ անհնարինության պայմաններում էլեկտրոնային փոստով ուղարկված, սակայն սահմանված ժամկետում վավեր էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերի ընդունումը նյութական կամ ընթացակարգային ինչպիսի՞ բացասական հետևանքներ կառաջացներ գնման գործընթացի համար, կամ դրանով գնումների մասնակիցների իրավահավասարության, արդար մրցակցության և

թափանցիկության ո՞ր սկզբունքը կխախտվեր:

Դատարանի գնահատմամբ՝ պատասխանողի կողմից դրսևորվել է ավելորդ ձևականություն, որը հանգեցրել է գնումների ընթացակարգի բուն նպատակի խեղաթյուրմանը: Գնումների գործընթացում էլեկտրոնային համակարգի կիրառումը միջոց է՝ ապահովելու գնումների արդյունավետությունն ու մասնակիցների հասանելիությունը, այլ ոչ թե ինքնանպատակ խոչընդոտ, որի տեխնիկական խոտանի հետևանքները պետք է բացասաբար անդրադառնան բարեխիղճ մասնակցի իրավունքների վրա:

Այս համատեքստում էական է դառնում նաև գնումների ոլորտը համակարգող լիազորված մարմնի դիրքորոշման իրավական արժեքի պարզումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը չի կարող ներգրավվել գնման գործընթացներում, լինել պայմանագրի կողմ, բացառությամբ իր կարիքների համար իրականացվող գնումների:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 11-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը՝ (...) 2) պատվիրատուներին մեթոդական օժանդակություն է ցուցաբերում գնումների գործի կազմակերպման հարցում. (...) 11) իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները. 12) գնումների վերաբերյալ ահազանգերի արձանագրման և հարցերին արագ արձագանքելու նպատակով ապահովում է գնումների աջակցության ծառայության (թեժ գիծ) առկայությունը:»:

Վերոնշյալ բառացի իրավակարգավորումների վերլուծությունից հստակ բխում է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը հանդիսանում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկումն ու համակարգումն իրականացնող, ինչպես նաև պատվիրատուներին մեթոդական օժանդակություն ցուցաբերող միակ իրավասու պետական մարմինը: Թեև Դատարանն արձանագրում է, որ Լիազորված մարմնի կողմից տրամադրվող մեթոդական պարզաբանումներն ու գրություններն ընդհանուր առմամբ պատվիրատուի կամ դատարանի համար չունեն կանխորոշիչ կամ պարտադիր իրավաբանական ուժ, այդուհանդերձ, էլեկտրոնային համակարգի տեխնիկական վիճակի, դրա արգելափակման փաստի և տեխնիկական անհնարինության հարցերում Լիազորված մարմնի տված գնահատականն ունի բացառիկ ապացուցողական նշանակություն:

Տվյալ դեպքում Լիազորված մարմնի ներկայացուցիչը՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի, 09.03.2026 թվականի թիվ 03/26-1/5742-2026 պաշտոնական գրությամբ Պատվիրատուին ուղղակիորեն հայտնել է, որ համակարգի տեխնիկական արգելափակման պայմաններում, քանի որ մասնակցի կողմից աշխատանքային կարգով տրամադրված փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված են շտկման համար սահմանված ժամկետում և քարտուղարին են ուղարկվել մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը, Գնահատող հանձնաժողովը կարող է և պետք է հիմք ընդունի քարտուղարի էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը և շարունակի հայտի գնահատումը:

Պատասխանողի կողմից էլեկտրոնային գնումների համակարգի բացառիկ սպասարկող և մեթոդական օժանդակություն ցուցաբերող մարմնի հստակ իրավական ու տեխնիկական դիրքորոշումն անտեսելը և հայցվորի հայտը

ձևական հիմքով մերժելը չի կարող որակվել իրավաչափ: Օբյեկտիվ անհնարինության պայմաններում վավեր էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը սահմանված ժամկետում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկելը հանդիսանում է պարտավորության պատշաճ կատարում, և Պատվիրատուն պարտավոր էր հիմք ընդունել այդ փաստաթղթերը՝ հայտի ընթացիկ գնահատումը համակարգում շարունակելու համար:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները և փաստական հանգամանքների համադրությունը՝ Դատարանը գտնում է, որ հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջի մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

### 6. Դատական ծախսեր և հայցի ապահովման միջոցի հարց.

*Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև պետական տուրքի գումարը, որը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Նման հաշվարկի հիման վրա է որոշվում օրենքով սահմանված և պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ԻՄՊԵՔՍՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ գնահատող հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 2-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունված որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման, գտնում է, որ պատասխանող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ հայցվոր «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության պետք է բռնագանձել վերջինիս կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

Միևնույն ժամանակ, Դատարանը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 25.05.2026 թվականի «Պետական տուրքի վճարումը հետաձգելու և հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին» որոշմամբ ավելացված հայցապահանջի՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52Ա/1

հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասով պետական տուրքի վճարումը հետաձգել է, իսկ հայցվորի պահանջը նշված մասով ենթակա է կարճման, գտնում է, որ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթի կարճման պայմաններում պետական տուրքի վճարման պարտականությունը կրում է հայցվորը:

*Անդրադառնալով փաստաբանի խելամիտ վարձատրության հարցին՝ Դատարանը գտնում է հետևյալը.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ փաստաբանի ծախսը վճարում է նրան ներգրաված գործին մասնակցող անձը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության ծախսեր են համարվում նաև փաստաբանական կազմակերպություններին վճարված կամ վճարման ենթակա գումարները:

Սույն հոդվածով նախատեսված ծախսերի փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

Ելնելով վերը նշված չափանիշներից և նկատի ունենալով, որ «Իմպեքստ» ՍՊ ընկերության և «Հովսեփյան իրավաբանական ընկերություն» ՍՊ ընկերության միջև 10.04.2026 թվականին կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը համաձայն մատուցված ծառայությունների արժեքը կազմել է 300.000 ՀՀ դրամ, ինչպես նաև հաշվի առնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը, գործի բարդությունը, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակը, Դատարանը փաստաբանի վարձատրության գումարի բռնագանձման մասով գալիս է այն եզրահանգման, որ պահանջվող և կողմերի միջև պայմանագրով սահմանված փաստաբանի վարձատրության չափը նշված գործով ողջամիտ չէ, ուստի որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 150.000 ՀՀ դրամը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցադիմումը ենթակա է բավարարման պետք է բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի, իսկ դատական ծախսերի հարցը մնացած մասով պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

**Վ Ճ Ռ Ե Ց**

**1.** «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության հիմք առարկ փոփոխոլու միջնորդությունը մերժել:

**2.** «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի 13.04.2026 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 52-Ա/1 հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասով, քաղաքացիական գործի վարույթը կարճել՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով:

**3.** «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունված որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասով բավարարել.

**3.1.** Անվավեր ճանաչել «ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 2-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունված՝ նույն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու, ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

**4.** ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

**5.** «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ հետաձգված պետական տուրքի գումար:

**6.** ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից հօգուտ «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊ ընկերության բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

**7.** Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

**8.** Վճիռը՝ գործի վարույթը կարճելու պահանջի մասով օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակվելուց մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

**9.** Վճիռը՝ հայցը բավարարելու մասով օրինական ուժի մեջ է մտնում հրապարակվելու պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

**10.** Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**



Digitally signed by SHILAJYAN ANNA
5208910872
Date: 2026.06.12 17:17:23 AMT

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE26-6DFF-4C30-907E հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։*

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*